

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ
ՅԵՎ,
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Ն. ԱՔՐԱՄՈՎ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

Ի. Տ. ԳՈՂՅԱԿՈՎԻ
ԼՄՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

347

Ա-16

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴՃՈՂԿՈՄԱՏԻ ԻՐԱՎԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Armenia

12-6178a

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ ՅԵՎ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

347

Ա-16

Ս. Ն. ԱՐԲԱՄՈՎ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

Ի. Տ. ԳՈՂՅԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Инв. № 16695

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՐԴՃՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ • 1940



01. 2013

Վերջին ժամանակները դատական որդանները համարվել են ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների նոր կազմերով, վորոնք դեռևս բավարար չտիրով ծանոթ չեն խորհրդային որենսդրութանն ու չունեն դատական աշխատանքի անհրաժեշտ փորձ: Այդ ընկերներին ողնություն է պետք, վորպեսզի նրանք արագ կերպով կարողանան տիրապետել դործին, ընդգրկեն դատական աշխատանքի հիմնական հարցերը, կողմնորոշվեն դատարանի առաջ դրված խնդիրներում:

«Ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալի գրադարանի» լույսընծայումը զգալի չափով կլրացնի արդարադատութան մարմինների իրավաբանական հանրամատչելի գրականության բացը և եյական ոժանդակություն ցույց կտա ժողովրդական դատավորին և ժողովրդական ատենակալին՝ նրանց գործնական աշխատանքում:

Գրադարանը բաղկացած է քրեական և քաղաքացիական իրավունքի, դատական իրավունքի առանձին հարցերին և ժողովրդական դատարանի աշխատանքների այլ առանձին հարցերին նվիրված մի շարք գրքերից:

Իրավաբանական հրատարակչությունը խնդրում է ընթերցողներին իրենց կարծիքն ու դիտողությունները լույս ընծայվող գրադարանի վերաբերյալ ուղարկել հրատարակչությանը:



3935-87

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դատական նիստը քաղաքացիական դատավարության հիմնական ու վճռական ստադիան է:

Մինչդեռ քրեական դատավարության ժամանակ մինչև դատական նիստը նախաքննության կարգով հավաքված բոլոր ապացույցները նախապես ստուգված են լինում, քաղաքացիական դատավարության ժամանակ միայն դատական նիստումն է, վոր առաջին անգամ տեղի յե ունենում բոլոր ապացույցների ստուգում և զննություն, այստեղ պարզվում է վեճի էյությունը, կողմերի իրական փոխհարաբերությունները, այստեղ է լուծվում այն հարցը, թե խախտված են արդյոք հայցվորի իրավունքները և արդյո՞ք պատասխանողն է խախտել դրանք: Դատական նիստում պարզվածի հիման վրա ել դատարանը սոցիալիստական պետության անունից կայացնում է իր վճիռը: Խորհրդային որենքների հիման վրա դատարանը լուծում է վեճը, վերականգնում է հայցվորի իրավունքները, վորոնք խախտված են լինում պատասխանողի կողմից, կամ թե հաստատում է կողմերի իրավունքների ու պարտականությունների առկայությունը կամ բացակայությունը: Կողմերը պետք է յենթարկվեն դատական վճռին, հակառակ դեպքում այդ վճիռը կատարվում է դատական կատարածուի միջոցով, հարկադրական կարգով:

Դատական նիստում քաղաքացիական վեճը քննելով, վճիռներ հանելով և այդ վճիռները հարկադրական կարգով կատարելով՝ դատարանը վոչ միայն տվյալ կոնկրետ վեճն է լուծում, վոչ միայն տվյալ քաղաքացու իրա-

վունքներն և պաշտպանում, այլև կոնկրետ որինակներով ցույց և տալիս, թե բանավորներն ու գյուղացիների սոցիալ-խտատական պետութիւնն ինչպէս և կարգավորում քաղաքացիներին, հիմնարկներին, ձեռնարկութիւններին ու հասարակական կազմակերպութիւններին այս կամ այն փոխհարաբերութիւնը՝ հոգուտ սոցիալխտատական շինարարութեան շահերին, հոգուտ խորհրդային քաղաքացիներին շահերին:

Ամեն մի քաղաքացիական գործի դատաքննութիւն, վորքան ել այն քիչ կարևոր թիվա, քաղաքական հսկայական նշանակութիւն ունի: Դատաքննութիւնը յուրաքանչյուր աշխատավորին մեջ դատախարակում և հարգանք դեպի խորհրդային որենքը, վորը հանդիսանում և մի գործիք, վորի միջոցով բանավորներն ու գյուղացիներին սոցիալխտատական պետութիւնը կառուցում և ԽՍՀՄ ամեն մի քաղաքացու յերջանիկ, ունևոր կյանքը:

Դրանով դատարանը կատարում և այն կարևորագույն խնդիրներէք մեկը, վոր նրա առաջ և դրել ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետութիւններին Դատարանակազմութեան որենքը: Ստալինյան մեծ Սահմանադրութեան հիման վրա վորոշելով արդարադատութեան խնդիրները ԽՍՀՄ-ում՝ այդ որենքի 3-րդ հոդվածով սահմանված և, վոր «Իր ամբողջ գործունեութեամբ դատարանը ԽՍՀՄ քաղաքացիներին դատախարակում և հայրենիքին և՛ սոցիալիզմի գործին նախընտրութեան վոգով, խորհրդային որենքներին ձգբիտ և անշեղ կատարման վոգով, սոցիալխտատական սեփականութեանը խնամքով վերաբերվելու, աշխատանքային կարգապահութեան, պետական և հասարակական պարտքին ազնվորեն վերաբերվելու, սոցիալխտատական հանրակեցութեան կանոնները հարգելու վոգով»:

Վլադիմիր Իլյիչ Լենինը նշում եր խորհրդային դատարանի կարևորագույն խնդիրը, այն և՛ «... ապահովել աշխատավորների կարգապահութեան ու ինքնակարգապահութեան ամենախիստ կիրառումը» (Լենին, Յերկ. հ. XXII, ուս. հր., էջ 424):

Այն վիթխարի քաղաքական նշանակութիւնը, վոր ընկեր Ստալինը տալիս և խորհրդային դատարանին, իր պարծառ արտահայտութիւնն և դտել Ստալինյան մեծ Սահմա-

նադրութեան մեջ, վորտեղ դատարանը աննախընթաց բարձրութեան և հասցված, վորտեղ շարադրված են մեր դատարանակազմութեան անասան, իսկական դեմոկրատական հիմունքները, վորոնք մեր իսկական ժողովրդական դատարանի համար հնարավորութիւններ են ապահովում աջակցելու աշխատավորների կոմունիստական դատախարակութեանը:

Դատարանի առաջ կանգնած վիթխարի խնդիրները նա լուծում և առաջին հերթին և գլխավորապես դատական նիստում, վորը տեղի յե ունենում որենքով սահմանված վորոշակի ձևերով, վորոնք ապահովում են գործի վերաբերյալ ճշմարտութիւնը հաջողութեամբ և ամենաճիշտ կերպով գտնելը: Այդ ձևերն ապահովում են կողմերի իսկական փոխհարաբերութիւնը պարզելու և որինական ու հիմնավորված վճիռ կայացնելու գործը:

Այդ ձևերը պաշտպանում են կողմերի իրավունքները, կողմեր, վորոնց դատարանը լսում և, վորոնց դատարանը հնարավորութիւն և տալիս ներկայացնելու բոլոր անհրաժեշտ ապացույցները՝ հաստատելու համար իրենց պահանջները կամ առարկելու համար ներկայացված պահանջների դեմ: Այդ ձևերը կողմերին հնարավորութիւն են տալիս պաշտպանելու իրենց իրավունքները, բացի այդ, նրանք դատարանին պարտավորեցնում են իր նախաձեռնութեամբ ու ախտիվութեամբ ողնել կողմերին՝ պարզելու իրենց իրավունքները:

«Դատավորը, —ասում և ընկ. Մ. Ի. Կալինինը, —վոչ միայն պետք և կարողանա քաղաքականապես ճիշտ հասկանալ տվյալ կոնկրետ գործն այն հանգամանքներում, վորոնց մեջ այդ գործը ծագել և, վոչ միայն պետք և կարողանա ճիշտ գնահատել, ճանաչել այդ գործում մասնակցութիւն ունեցող մարդկանց, յերևան բերել յուրաքանչյուր տվյալ գործի բոլոր զսպանակները, նրա դատակարգային աստուծն ու էյութիւնը, այլև, բացի այդ, նա պետք և կարողանա այդ անել այնպես համոզիչ, այնպես ցուցադրական կերպով, վոր վոչ միայն նա ինքն ու ժողովրդական ատենակալները, այլև դատարանում բոլոր ներկա յեղոյները հասկանան այդ գործը և ըմբռնեն դատարանի կայացրած

վճուխի ճշտութիւնը» (Մ. Ի. Կալինինի ճառը ԽՍՀՄ Գերագուցն դատարանի 10-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում, — «С. Ю» 1934 թ. № 13):

Դատարանի վճուխի այդ համոզուելիութունը ձեռք է բերվում դատական նիստը վարելու համար որենքով սահմանված համապատասխան կարգը կիրառելով: Դատարանի վճուխի այդ համոզուելիութունը քաղաքացիներին դրդում է խորհրդային որենքների համեմատ համաձայնեցնել իրենց վաբքը, իրենց վերաբերմունքը մյուս քաղաքացիների, խորհրդային պետութիւնի նկատմամբ: Այս է այն վիթխարի հասարակական-քաղաքական և դատավարական նշանակութիւնը, վոր ունի քաղաքացիական գործերի դատական նիստը:

Այստեղից միանգամայն պարզ հետևում է, վոր դատաքննութիւնի դատավարական կարգն այն հիմնական պայմանն է, վոր ապահովում է արդարադատութիւնի կիրառման ճշտութիւնը:

Դատավարութիւնի որենքի պահանջներն արհամարհելը չի կարող չանդրադառնալ գործի քննարկման ճշտութիւնի վրա, հետևապէս նաև դատարանի կայացրած վճուխի վրա և պատճառ է դառնում այդ վճուխի փոփոխման, վորով խախտվում է դատարանի հեղինակութիւնը, հետևապէս, դատական նիստը չի հասնում այն քաղաքական նշանակութիւնը, վոր պետք է նա ունենա:

Դատարանը չի կարող հարգանք դաստիարակել որենքի նկատմամբ, յետե նա ինքն որենքները ճշտորեն կատարելու որինակ չի ծառայում:

Դատական նիստում իրենց ամենալիակատար մտմանցումն են գտնում խորհրդային քաղաքացիական դատավարութիւնի դեմոկրատական սկզբունքները:

Գ Լ Ո Ւ Ե II

ԱՅՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՎՈՐՈՆՑ ՎՐԱ
ԿԱՌՈՒՑՎԱԾ Ե ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Այն սկզբունքները, վորոնց վրա կառուցված է դատական նիստը, հետևյալներն են. մրցակցութիւն, կողմերի

իրավահավասարութիւն, հրապարակայնութիւն, բանավորութիւն և անմիջականութիւն, կողմերի համար՝ դատաբանում մայրենի լեզվով յելույթ ունենալու և գործի նյութերին ծանոթանալու հնարավորութիւն և դատավարութիւնի անընդհատութիւն:

Յուրաքանչյուր առանձին սկզբունքի քննութիւնն անցնելուց առաջ անհրաժեշտ է կանգ առնել դիսպոզիտիվութիւնի սկզբունքի վրա, վորը քաղաքացիական դատավարութիւնի կարևորագույն սկզբունքներից մեկն է և դատական նիստում վիթխարի նշանակութիւն ունի:

Ինչպոզիտիվութիւնը խորհրդային քաղաքացիական դատավարութիւնի մեջ կայանում է նրանում, վոր կողմերն իրավունք ունեն տնորինելու իրենց պատկանող նյութական և դատավարական իրավունքները: Բուրժուական դիտնականները դիսպոզիտիվութիւնի սկզբունքը բացատրում են հետևյալ կերպ. բոլոր մարդիկ որենքի առաջ հավասար են, յուրաքանչյուր անձ լիակատար ազատութիւն է վայելում տնորինելու իր (անձամբ իրեն պատկանող) իրավունքները: Ով ուզում է իրականացնել իր իրավունքները, պետք է ինքը հողա դրա մասին, պետութիւնը քաղաքացիների մասնավոր գույքային հարաբերութիւններին չի խանդում: Դատարանը առանց շահագրգռված անձի դիմումի քաղաքացիական վեճերի քննութիւն չի ձեռնարկում: Հայցվորն իրավունք ունի տնորինելու իր հայցը և հենց դատավարութիւնի ընթացքը. նա կարող է դադարեցնել գործի վարույթը, հրաժարվել հայցից և այլն: Պատասխանողն էլ իր հերթին իրավունք ունի հայցը ճանաչելու: Կողմերը կարող են հաշտութիւն գործարք կնքել, վեճը դանդատարկել և այլն: Կողմերի բոլոր կարգադրութիւնները դատարանի համար պարտադիր են, նա չի խանդում «մասնավոր գույքային իրավունքներին»: Բայց իրականում այդ այդպէս չէ: Բուրժուական հասարակութիւնի մեջ փաստորեն բոլոր մարդիկ որենքի առաջ հավասար չեն, ինքը՝ որենքը ունեորին պաշտպանում է չունեորից, իսկ յերբ որենքներն ունեորների շահերը չեն պաշտպանում, պետութիւնն ի դեմս դատարանի միջամտում է և ապահովում ունեորի շահերը:

Իսկ մեզ մոտ, սոցիալիզմի յերկրում, վորտեղ ապահոված է անձի քաղաքական ու տնտեսական ազատությունը, վորտեղ ներդաշնակորեն զուգորդվում են անհատի ու հասարակության շահերը, անհատի նախաձեռնությունը հայտարարեն ամենևին չի բացառում պետության ակտիվ դերը իրավունքների իրականացման ու պաշտպանության գործում: Ուստի և դիսպոզիտիվության սկզբունքը խորհրդային քաղաքացիական դատավարության մեջ վոչ միայն կողմերի նախաձեռնության և ակտիվության մեջ է կայանում, այլև դատարանի և դատախազության, իսկ վորոչ դեպքերում՝ նաև պետական հիմնարկությունների ու հասարակական կազմակերպությունների նախաձեռնության և ակտիվության մեջ:

Համաձայն ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 2-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների՝ դատարանը գործի քննությանը ձեռնամուխ է լինում միայն շահագրգռված կողմի դիմումի համաձայն, սակայն Քաղ. Դատ. Որ. նույն հոդվածի համաձայն դատարանը գործի քննությանը ձեռնարկել կարող է նաև դատախազի հայտարարության համաձայն: Ծնողներից յերեխաների պահպանության համար միջոցներ (ալիմենտ) գանձելու և հայրությունը հաստատելու վերաբերյալ գործերը դատարանը կարող է իր վարույթում ընդունել վոչ միայն ծնողների դիմումի համաձայն, այլև խնամակալների դիմումով, քաղաքացիական կացության գրանցման բաժնի (ՉԱԳՍ) հաղորդումով, մայրության ու մանկության պահպանության որդանի հայցով, խնամատարի, պրոֆմիության հայցով, ինչպես և կարող է գործ սկսել չենց դատարանի նախաձեռնությամբ (ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդվ. 2 և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Աշխատանքից վոչ ճիշտ կերպով հեռացնելու վերաբերյալ գործեր քննելիս դատարանը, վորոչելով, վոր ձեռնարկությունը պետք է վճարի հայցվորի ակամա գործալքման ժամանակամիջոցի վարձատրությունը, միաժամանակ իր նախաձեռնությամբ կարող է բանվորին վոչ ճիշտ

կերպով հեռացնելու գործում մեղավոր անձից վորոչել ձեռնարկության որոշին կրած վնասը (ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 172-րդ հոդված և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Դատախազն իրավունք ունի գործին միջամտելու դատավարության ամեն մի ստադիայում:

Դիսպոզիտիվության սկզբունքը դատական նիստում իր արտահայտությունը գտնում է այն բանում, վոր հայցվորը կարող է հայցից հրաժարվել, իր հայցապահանջն ավելացնել կամ նվազեցնել, պատասխանողը կարող է հայցը ճանաչել, կողմերը կարող են հաշտություն կընքել: Կողմերի այդ բոլոր կարգադրությունները դատարանի համար պարտադիր չեն այն իմաստով, վոր դատարանը պետք է ստուգի, թե արդյոք դրանք չեն հակասում որենքին, չեն խախտում, չեն շրջանցում որենքը, չեն խախտում պետության շահերը, յերբորդ անձերի շահերը կամ թե այդ կարգադրությունները խաբեյության, սպառնալիքների և այլ ազդեցությունների տակ չեն ալըվում արդյոք: Յեվ միայն այն դեպքում, յերբ դատարանը համոզվում է, վոր վերոհիշյալ մոմենտները բացակայում են, կարող է գործը կարճել հայցվորի՝ իր հայցից հրաժարվելու կամ կողմերի հաշտվելու հետևանքով և կամ բավարարել հայցը պատասխանողի կողմից հայցն ընդունելու հիման վրա: Դատարանը վճիռ կայացնելիս կաշկանդված չէ հայցապահանջի չափերով և հայցվորի որոշին կարող է ավելի վորոչել, քան նա խնդրում է (ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 179):

Դիսպոզիտիվության սկզբունքն արտահայտվում է նաև նրանով, վոր վոչ միայն կողմն իրավունք ունի վճիռը գանդատարկել, այլև բողոքարկել կարող է նաև դատախազը: Յերկրորդ աստանի դատարանը գանդատի մեջ նշված առարկություններով ու պատճառաբանություններով կաշկանդված չէ: Նա պարտավոր է հսկողության կարգով վորոչումն ստուգել ամբողջ ծավալով և բազմակողմանիորեն՝ ինչպես գանդատ տվող կողմի նկատմամբ, այնպես էլ այն անձերի նկատմամբ, վորոնք չեն գանդատարկել վճիռը:

Մրցակցութունն ու կողմերի իրավահավասարութունը: Դիսպոզիտիվութեան սկզբունքի հետ սերտորեն կապված է մրցակցութեան սկզբունքը: Այդ սկզբունքի լավագույն քննարկումը հնարավոր է միայն մի ուրիշ սկզբունքի, այն է՝ կողմերի իրավահավասարութեան սկզբունքի հետ միասին:

Մրցակցութունն նշանակում է դատավարութեան այնպիսի կազմակերպումը, վորի ընթացքում դատարանի առաջ հանդես են գալիս յերկու իրավահավասար կողմեր՝ հայցվորը և պատասխանողը, վորոնք գործի ամբողջ քննութեան ընթացքում հավասար իրավունքներ ունեն: ՌԻՅՍՍ ՀՔաղ. Դատ. Որ. 118-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները սահմանում են, վոր «Յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցելու այն հանգամանքները, վորոնց վրա նա հիմնում է իր պահանջներն ու առարկութիւնները: Ապացուցները ներկայացնում են կողմերը, ինչպես և կարող են հավաքվել դատարանի նախաձեռնութեամբ: Յեթն ներկայացված ապացուցներն անբավարար են, դատարանը կարող է կողմերին առաջարկել լրացուցիչ ապացույցներ ներկայացնել»:

Բուրժուական տեսաբանները կեղծավորաբար պնդում են, «... թե դատավարութեան ընթացքում ակտիվ դերն ամբողջապես պետք է պատկանի կողմերին, իսկ դատարանը միայն պետք է պասսիվ դիտողը լինի իր առջև տեղի Եւնեցող պայքարի, պայքար այն առարկայի համար, վորի նկատմամբ, բացի վիճող կողմերից, ուրիշ վոչ վոք գործ չունի»:

Այս պնդումի կեղծավորութիւնը կայանում է նրանում, վոր բուրժուական դատարանում պայքարը տեղի յե ունենում յերկու անիրավահավասար կողմերի միջև և պայքարի անհավասար միջոցներով, իսկ դատարանն ամենևին էլ չի մնում վորպես «պասսիվ դիտող», այլ այսպես թե այնպես այդ պայքարում ոգնում է մեկ կողմին, սակայն այն կողմին, վորն առանց այն էլ պաշտպանված է որենքով և պաշտպանութեան հիանալի միջոցներ ունի:

Մեր որենքը կողմերին կողմնորոշում է, վոր նրանք գործի բոլոր հանգամանքները պարզելու և զրանք անհրաժեշտ ապացույցներով հաստատելու համար պարտավոր են առաջին հերթին հույսը դնել իրենց սեփական նախաձեռնութեան ու ակտիվութեան վրա: Կողմերն իրենք պետք է ապացույցներ բերեն՝ հաստատելու համար իրենց պահանջները կամ իրենց առաջադրված պահանջների դեմ արած առարկութիւնները, բայց որենքը դատարաններին պարտավորեցնում է չմնալ վորպես «պասսիվ դիտող», այլ ակտիվորեն և ինքնուրույնաբար յերևան բերել գործի բոլոր հանգամանքները՝ պահանջելով անհրաժեշտ ապացույցներ: Խորհրդային դատարանը, վորը կոչված է պաշտպանելու սոցիալիստական պետութեան շահերն ու քաղաքացիների իրավունքները, անտարբեր չի մնում կողմերի միջև տեղի Եւնեցող վեճի նկատմամբ: Գործի առթիվ կայացրած վեճուք պետք է լինի հիմնավորված և որինական, համապատասխանի սոցիալիստական պետութեան շահերին և զբաղնով իսկ՝ առանձին քաղաքացիների շահերին: Ուստի և դատարանը գործի բոլոր հանգամանքները յերևան հանելու նկատմամբ պետք է հանդես բերի նախաձեռնութիւն և ակտիվութիւն:

Այդ ամենևին չի նշանակում, թե կողմերը պասսիվ են մնում. կողմերի ու դատարանի նախաձեռնութեան ու ակտիվութեան գուգորդումը հնարավորութիւն է տալիս իսկական դեմոկրատական ձևերով պարզելու ճշմարտութիւնն ու կողմերի իրական փոխհարաբերութիւնները:

Կողմերի իրավունքների պաշտպանութեան գործում լիակատար որչեպիտիվութիւնն պահպանելով՝ դատարանը պարտավոր է ամեն կերպ ձգտել, վորպեսզի պարզի կողմերի իսկական իրավունքներն ու փոխհարաբերութիւնները: Խորհրդային դատարանը չի կարող անտեսել նաև կողմերի փաստական անհավասարութիւնը դատավարութեան ընթացքում: Իրա համար էլ ներկայացված բացատրութիւններով ու նյութերով չբավականանալով՝ դատարանը կողմերին տրվող հարցերի միջոցով պետք է նպաստի գործի լուծման համար եյական հանգամանքները յերևան բերելուն և այդ հանգամանքներն ապացույցներով հաստատելուն:

Դրա համար նա դատարանին դիմող աշխատավորներին աղտիվ աջակցութիւն պիտի ցույց տա սրաշտպանելու իրենց իրավունքներն ու որինական շահերը, վորպէսզի իրավաբանական անտեղյակութիւնը, կիսագրագիտութիւնն ու նման այլ հանգամանքները նրանց վնաս չբերեն: Միաժամանակ դատարանը կողմերին բացատրում է նրանց դատավարական իրավունքները՝ նախազգուշացնելով այն հետեւանքներից, վոր կապված են դատավարական գործողութիւններէ կամ դերանք զանց առնելու հետ (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 5 և մյուս միութենական հանրապետութիւններէ Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Կողմերն իրավունք ունեն վոչ միայն ապացույցներ ներկայացնելու, այլև 1) ակտիվորեն մասնակցելու յուրաքանչյուր առանձին ապացույցի քննութիւնը, 2) բացատրութիւններ տալու յուրաքանչյուր առանձին ապացույցի վերաբերյալ, անկախ նրանից, թէ ով է ներկայացրել այդ ապացույցը, 3) նշել ապացույցները քննարկելու այն կարգը, վոր իրենք ամենանպատակահարմարն են համարում, 4) հարուցելու ամեն տեսակ միջնորդութիւններ, 5) ապացույցների քննարկումն ավարտելուց հետո դատարանին ներկայացնելու իրենց բացատրութիւնները (կողմերի վիճարանութիւն):

Դատական նիստում ծագող բոլոր հարցերը, կողմերի բոլոր միջնորդութիւնները լուծում է դատարանը, նա կարող է համաձայնվել կամ չհամաձայնվել կողմերի կարծիքին, սակայն, գործի քննութիւն կարգին, ապացույցներ պահանջելու կամ գործին կցելու և նրանց քննութիւն վերաբերյալ դատարանի վոչ մի վորոշում չի կարող կայացվել առանց նախապես կողմերի կարծիքը լսելու: Դատավարութիւն ընթացքում կողմերի իրավունքներն անտեսելը, այդ իրավունքների խախտումը հեղափոխական որինականութիւն ամենակոպիտ խախտում է հանդիսանում:

Դրա հետ միասին դատարանը պէտք է հիշի, վոր կողմերը պարտավոր են բարեխղճորեն ոգտվել իրենց բոլոր դատավարական իրավունքներով: Ուստի դատարանը պարտավոր է խափանել այն բոլոր չարարկութիւններն ու գիմումները, վորոնց նպատակն է ձգձգել գործի քննութիւնը

կամ մթաղնել դատավարութիւնը (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 6 և մյուս միութենական հանրապետութիւններէ Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Իժվար չէ համոզվել, վոր մրցակցութիւն սկզբունքն իրագործելի չէ միայն այն ժամանակ, յերբ յերկու կողմերը հավասար են, և այն ել վոչ թէ ձեւականորեն, այլ փաստորեն: Վորտեղ չկա կողմերի իրավահավասարութիւն, այնտեղ խոսք անգամ չի կարող լինել մրցակցութիւն սկզբունքի իրականացման մասին, հետեւապես խոսք անգամ չի կարող լինել նաև որչեկտիվութիւն մասին, կողմերի իսկական իրավունքներն ու փոխհարաբերութիւնները պարզելու մասին:

Խորհրդային սոցիալիստական քաղաքացիական դատավարութիւնը կառուցված է դեմոկրատիկ լայն հիմունքների վրա, ուստի դատական նիստը կառուցված է կողմերի իսկական իրավահավասարութիւն, կողմերի ու դատարանի նախաձեռնութիւն ու ակտիվութիւն վրա:

Դատական նիստի հրապարակայնութիւն սկզբունքն արտահայտվում է նրանում, վոր դատական նիստում դատարանի բոլոր գործողութիւնները, բացի քննարկումից ու վճիռ կազմելուց, տեղի չեն ունենում դռնբաց, հրապարակորեն: Գործը լսվում է կողմերի ներկայութիւնում ու մասնակցութիւնով: Ամեն մի ցանկացող կարող է ներկա լինել դատարանում:

Այդ սկզբունքը լիովին համապատասխանում է այն խնդիրներին, վոր դրված են խորհրդային դատարանի վրա: Դատարանի դատտարակչական դերն իրագործելի չէ միայն շնորհիվ այն բանի, վոր գործերի քննութիւնը տեղի չէ ունենում դռնբաց: Աշխատավորութիւն լայն մասսաները հնարավորութիւն ունեն դատարանի վճիռներին ծանոթանալու վոչ միայն դատարանի դահլիճում, այլև մամուլի միջոցով, վորը կարող է հաշվետվութիւն տալ դատական նիստի մասին:

Դատական նիստի այսպիսի կազմակերպումը դատարանին ոգնում է կապ ստեղծելու իր ընտրողների հետ, աշխատավորութիւն լայն մասսաների հետ:

Ահա թէ ինչու խորհրդային դատարանի կազմակերպ-

ման առաջին իսկ որերից սահմանված է դատարանի հրապարակայնութիւնը: Ստալինյան մեծ Սահմանադրութիւնն այդ դատավարական սկզբունքը դարձրեց սահմանադրական սկզբունք: ԽՍՀՄ, միութենական ու ավտոնոմ հանրապետութիւնների Դատարանակազմութեան որենքի Գ-րդ հոդվածը ԽՍՀՄ Սահմանադրութեան 111-րդ հոդվածին համապատասխան սահմանում է, վոր «գործերի քննութիւնը ԽՍՀՄ-ի բոլոր դատարաններում, վորչափով որենքը բացառութիւններ չի նախատեսում, կատարվում է դռնբաց»:

Այսպիսով, բոլոր գործերը և բոլոր դատարաններում պետք է քննվեն դռնբաց: Այդ կանոնից բացառութիւններ նախատեսված են ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 95-րդ հոդվածով և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածներով, վորոնք սահմանում են, վոր գործի քննութիւնը դռնփակ թույլատրվում է, ա) յեթե գործի հանգամանքներով պետական դադանիքի պահանջան տեսակետից գործի դռնբաց քննութիւնը կարող է ցանկալի չլինել և բ) յեթե գործի հանգամանքները վերաբերում են կողմերի ինտիմ կյանքին:

Այդ դեպքերում դատարանը պարտավոր է պատճառաբանված վորոշում կայացնել, ճշտորեն նշելով, թե ինչի՞ հիման վրա նա անհրաժեշտ է համարում գործը լսել դռնփակ դատական նիստում: Դատարանը կարող է դռնփակ դատական նիստ ունենալու մասին վորոշում կայացնել նաև գործի առանձին հանգամանքներ պարզելու համար միայն: Այդ դեպքում նիստը դռնփակ է լինում միայն կողմնակի մարդկանց համար, կողմերը, նրանց ներկայացուցիչները, փորձագետները, թարգմանիչները, վկաները մասնակցում են նաև դռնփակ նիստերին:

Դատարանի վճիռը բոլոր դեպքերում հայտարարվում է հրապարակորեն:

Բանավորութիւնն ու անմիջակամութիւնը: Այս սկզբունքների էությունն այն է, վոր դատարանը բոլոր ապացույցներին, գործի բոլոր նյութերին պետք է ծանոթանա և յուրաքանչյուր ապացույցը քննի ու հետազոտի անմիջականորեն, բանավոր կերպով: Այն դատավորները, վորոնք պետք է գործի վերաբերյալ վճիռ կայացնեն, անձամբ

պետք է լսեն կողմերի բացատրութիւնները, վկաների ցուցմունքները, փորձագետների յեղրակացութիւնները, ծանոթանան գործում յեղած բոլոր փաստաթղթերին, զընեն իրեղեն ապացույցները:

Պետք է հիշել, վոր այս սկզբունքների պահպանումը նիստի դահլիճում ներկա յեղողներին հնարավորութիւն է տալիս ստուգելու դատարանի վճիռի ճշտութիւնը, վորոշումն ալելի համոզիչ է դառնում, դատարանի հեղինակութիւնն ամրապնդվում է:

Դատավարութեան անընդհատութիւնը: Անմիջականութեան սկզբունքով պայմանավորված է յուրաքանչյուր քաղաքացիական գործ անընդհատ և դատավորների անփոփոխ կազմով լսելու անհրաժեշտութիւնը:

Դատավարութեան անընդհատութեան սկզբունքը յենթացրում է դատաքննութեան այնպիսի կարգ, յերբ ամբողջ փաստականնյութը քննում ու ըմբռնում է դատարանի մեկ անփոփոխ կազմ, ըստվորում դատարանի այդ կազմը գործի քննութեանն անցնելով՝ չի կարող զբաղվել ուրիշ աշխատանքով կամ ուրիշ գործերի քննութեամբ, քանի դեռ չի ալարտել մի անգամ սկսած գործի քննութիւնը:

Ճշտ է հասկանալ, վոր գործի քննութեան ընթացքում դատարանի կազմի փոփոխութիւնը կհասցնի անմիջականութեան ու բանավորութեան սկզբունքների կոպիտ խախտման, վորովհետև դատարանի նոր կազմը հնարավորութիւն չի ունենա անմիջականորեն և բանավոր կերպով ըմբռնելու գործի փաստական նյութերի մի մասը, վորն արդեն քննել է դատարանը: Այդ դեպքում դատավարութիւնը դառնում է գրավոր, վորևէ անմիջականութեան մասին խոսք անգամ լինել չի կարող: Անթույլատրելի յե նաև, յերբ, որինակ, փորձագետների յեղրակացութիւնը կազմելու համար արված ընդմիջումի ժամանակ ուրիշ գործ է լսվում: Այդ դեպքում տարբեր գործերին վերաբերող հանգամանքները շփոթվում են: Յեթե գործի քննութիւնը հետաձգված է, ապա գործի նոր քննութիւնը պետք է սկսվի նորից, անպայման հետազոտելով բոլոր ապացույցները: Յեթե գործի քննութեան ընթացքում ժողովրդական տեսնակալը կազմից

դուրս ե գալիս, գործի քննութիւնը պետք է հետաձգվի չի կարելի դատարանի կազմի մեջ նոր ատենակալ մտցնել և գործի քննութիւնը շարունակել: Մեծ գործերը լսելու դեպքում հանձնարարվում է դատարանի կազմի մեջ մտցնել պահեստի ատենակալ, վորն ամբողջ ժամանակ նիստին ներկայանում և կա յե լինում և յեթե ատենակալներէից մեկը հեռանում է, փոխարինում է նրան և գործի քննութիւնը շարունակվում է:

Կողմերի համար դատարանում մայրենի լեզվով հանդես գալու և գործի նյութերին ծանոթանալու իրավունք ապահովելը: Այն սկզբունքները, վորոնց համաձայն կառուցվում է դատական նիստը—մրցակցութիւնը, կողմերի իրավահավասարութիւնը, բանավորութիւնը, անընդհատութիւնը—իրագործելի յեն միայն այն ժամանակ, յերբ դատարանը գործը քննում է կողմերի մայրենի լեզվով: Ահա թե ինչու, լենինյան—ստալինյան ազգային քաղաքականութեանը համապատասխան, խորհրդային դատարանում միշտ հատուկ ուշադրութիւն է դարձվել այն բանի վրա, թե դատավարութիւնն ինչ լեզվով պիտի կատարվի: Այդ սկզբունքն ամրապնդված է Ստալինյան մեծ Սահմանադրութեան մեջ, վորը 110-րդ հոդվածով սահմանում է «Դատավարութիւնը կատարվում է միութենական կամ ավտոնոմ հանրապետութեան կամ ավտոնոմ մարզի լեզվով, այդ լեզվին չտիրապետող անձերի համար ապահովելով լիակատար ծանոթացումը գործի նյութերին, թարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանրապետական իրավունքը: Առանձին միութենական հանրապետութիւնների սահմանադրութիւններում ասված է, վոր դատավարութիւնը կատարվում է նաև ազգային ոկրուզի կամ ազգային շրջանի լեզվով:

Յեթե դատավարութիւնը կատարվում է այնպիսի լեզվով, վորը կողմերից մեկին հասկանալի չէ, դատարանը պարտավոր է նրան ապահովել թարգմանիչով, վորի միջոցով այդ կողմը ծանոթանում է գործում յեղած բոլոր փաստաթղթերին, դատարանում տեղի ունեցող բոլոր գործողութիւններին: Կողմն ամեն տեսակ դիմումներ ու փաս-

տաթղթեր (հայցադիմումներ, դանդատներ և այլն) կարող է դատարանին հանձնել մայրենի լեզվով, վճիռների ու վորոշումների պատճենները կողմին պետք է տրվեն նրա մայրենի լեզվով:

Որենքի այս պահանջի արհամարհումն ու թերազնահատումը հանդիսանում է Ստալինյան Սահմանադրութեան խախտում, լենինյան—ստալինյան ազգային քաղաքականութեան խեղաթյուրում և հիմք է ծառայում անպայման բեկանելու դատական վճիռը:

Գ Լ Ո Ի Խ III

ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ

Դատական նիստի կանոնավոր ընթացքն ապահովելու համար դատավորը պետք է կատարի հետևյալ գործողութիւնները. 1) գործը նախապատրաստի, 2) նշանակի գործը քննութեան և կարգադրութիւն անի, վոր իր ժամանակին ծանուցվեն կողմերը, կանչվեն վկաները, վորձագետները, անհրաժեշտութեան դեպքում նաև դատախազը, 3) կանչվեն ատենակալները, 4) ուսումնասիրի գործի նյութը և ծանոթացնի ատենակալներին:

Գործը քննելուց առաջ խնամքով նախապատրաստելը դատավորի շատ կարևոր և եյական պարտականութիւնն է հանդիսանում: Հաճախ առանց այդպիսի նախապատրաստման գործը դատական նիստում քննվել չի կարող և հարկ է լինում այն հետաձգելու: Ստեղծվում է ձգձգում և քաշքշուկ, վորոնք միանգամայն անթուլրատրելի յեն դատական գործում¹:

Գործը քննութեան նշանակելը, կողմերին ծանուցելը և վկաներին ու փորձագետներին կանչելը: Կան դատավորներ, վորոնք գործը քննութեան նշանակելը համարում են տեխնիկական աշխատանք և այդ գործը հանձնարարում են քարտուղարին: Մինչդեռ գործը քննութեան նշանակելը բոլորովին էլ տեխնիկական գործ չէ, այլ պատասխանատու

¹ Սրա մասին ավելի մանրամասն տես սույն գրադարանի «Դատական նիստի նախապատրաստումը» բրոշյուրը:



աշխատանք է, վոր պետք է կատարել ինքը՝ դատավորը: Դատավորը պետք է վորոշի դատական նիստի վոչ միայն որը, այլ և ժամը, վորպեսզի կողմերը, վկաները, փորձագետները կարողանան ազատվել իրենց առօրյա զբաղմունք-դեմքերը կարողանան նախապատրաստվել մասնակցելու գործի քննութայնը:

Որենքը գործերի առանձին կատեգորիաների քննութայն համար ճշգրիտ ժամկետներ է սահմանում: ՌՆՖՍՀ Գաղ. Դատ. Որ. հոդ. հոդ. 53ա և 53բ և մյուս միութենական հանրապետութայնների Գաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները ժամկետներ են սահմանում աշխատանքային ու ալիմենտային գործերի քննութայն համար: ԽՍՀՄ ԺԿԽ, ՀամԿ(բ)Կ ԿԿ և ՀԱՄԿԽ 1938 թ. դեկտեմբերի 28-ի վորոշումով վոչ ճիշտ հեռացման վերաբերյալ գործերի քննութայն համար սահմանվում է հնգօրյա ժամկետ: Այլ կատեգորիաների գործերի քննութայն համար ժամկետներ են սահմանված ԽՍՀՄ և միութենական հանրապետութայններում: Վերջինների դիրեկտիվներով: Գործերի քննութայն ձգձգումը դժվարացնում է դատարանի աշխատանքը, քաջընդունել է ստեղծում և նվազեցնում է խախտված իրավունքների վերականգնման եֆեկտը: Ժամկետների անպայ-ման պահպանութայնը պետք է զուգորդել կողմերի իրավունքների պաշտպանութայնը, ուստի դատական նիստի վորը պետք է նշանակվի այն հաշվով, վորպեսզի դատավորը մասնակցները ծանուցադրեն ստանան իր ժամանակին և ծանուցադրեր յերկրորդ որինակները ստորա-գրված դատարանում ստացվեն մինչև գործի քննութայն որը:

Անհրաժեշտ դեպքերում ծանուցադրի հետ միասին պատասխանողին պետք է ուղարկել նաև հայցադիմումի և նրան կցված փաստաթղթերի պատճենները:

Ժողովրդական ատենակալներ կանչելը: Դատավորը պետք է միջոցներ ձեռք առնի, վորպեսզի հերթական ժող. ատենակալները ժամանակին կանչվեն, վորպեսզի ժողովը-դական ատենակալի բացակայութայն պատճառով դատա-

պան նիստը չհետաձգվի: Դատավորը պարտավոր է ներկա-յացած ատենակալներին ոգնել՝ ծանոթանալու գործերին և համապատասխան որենքներին: Միայն այդ դեպքում ատենակալները կկարողանան ակտիվ մասնակցութայն տեսնալ գործի քննութայնը:

Գործի ուսումնասիրութայնը: Թեպետ և դատավորը գործի նախապատրաստման ընթացքում ծանոթացած է լի-նում նրան, այնուամենայնիվ գործը քննելուց առաջ, դա-տական նիստի նախորդակին, դատավորը պարտավոր է խնամքով գործն ուսումնասիրել, ապացույցների քննութայն նախնական պլան կազմել, յեթե գործը բարդ է՝ փաստա-թղթերից քաղված քննութայնը:

Դատական նիստում նախազահող դատավորը պետք է գործի հանգամանքները պարզորոշ ու հստակ շարադրի և զատական նիստն այնպես դեկավարի, վորպեսզի բոլոր հանգամանքները պարզվեն, մի կողմ թողնվեն գործին չվե-րաբերող և գործի համար նշանակութայն չունեցող հան-գամանքներն ու ապացույցները: Յեթե դատավորը գործը չգիտե, ապա նա չի կարող դատական նիստը դեկավարել, յեթե չգիտե, թե ինչի մասին հարցնել կողմերին, վկանե-րին, ապա գործի քննութայնն ընթանում է առանց վորո-շակի ուղղութայն, հարկավոր հանգամանքները չեն պարզ-վում, գործը ծանրաբեռնվում է իրեն չվերաբերող նյութե-րով: Դրա հետևանքը լինում է այն, վոր վոչ դատավորը, վոչ ատենակալները, վոչ դատական նիստի դահլիճում ներկա յեղողները պարզ պատկերացում չեն կազմում վեճի եյութայն մասին: Այդպիսի պայմաններում վճիռը կարող է անհիմն լինել և կրեկանվի:

Գ Լ Ո Ի Խ IV

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Գործի վերաբերյալ դատական նիստը պետք է տեղի տեսնա վորոշակի ծրագրով, վորպեսզի լավագույն ձևով ապահովվի կողմերի իսկական փոխհարաբերութայնների վորոշումը: Գործի քննութայնը պետք է ծավալվի վորոշա-

կի հետևողականությամբ, վորպեսզի յուրաքանչյուր հա-
ջորդ գործողությունը լինի նախորդի բնական զարգացու-
մբ, նրա վրա հիմնվի և նրանով պայմանավորվի:

Դատական նիստը յուրաքանչյուր գործով կարելի չե-
բաժանել հետևյալ ստադիաների. 1) նախապատրաստական
ստադիա, 2) ապացույցների հետազոտություն (գործի
քննությունն ըստ ելության), 3) կողմերի վիճարանու-
թյուն, 4) վորոշման հրապարակում:

Նախքան դատավարության առանձին ստադիաների
պարզաբանմանն անցնելը՝ հարկավոր է պարզել նախագա-
հի դերը դատական նիստում:

ՌԽՑՍՀ Քաղ. Դատ. Որ. այդ հարցերը կարգավորող
նորմաներ չկան: ՈւՍՀ Քաղ. Դատ. Որ. 114-րդ հոդվածը
և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ.
Որ. համապատասխան հոդվածները՝ նախագահողի վրա յե-
ղևում դատական նիստի ղեկավարությունը և դատական
նիստում կարգ պահպանելու պարտականությունը, նրան
իրավունք են վերապահում ներգործության միջոցներ կի-
րառելու կարգը խախտող անձերի նկատմամբ:

Թուրքմենական ԽՍՀ Քաղ. Դատ. Որ. 117-րդ հոդվա-
ծը, բացի այդ, սահմանում է, վոր նախագահողը, ղեկա-
վարելով դատական նիստի ընթացքը, պարտավոր և՛ նրա-
նից հեռացնել այն ամենը, ինչ առնչություն չունի քննվող
գործի հետ, և նիստին տալիս է այն ընթացքը, վորն ավելի
լավ է նպաստում կողմերի իսկական իրավունքներն ու
փոխհարաբերությունները պարզելուն: Թեպետ մյուս միու-
թենական հանրապետությունների որենսդրված և մաս-
նավորապես ՌԽՑՍՀ Քաղ. Դատ. Որ. այդպիսի կանոն
չկա, սակայն դատական նիստի ընդհանուր նշանակությու-
նից և նիստը ղեկավարող նախագահողի պարտականու-
թյուններից պետք է գալ այն յեղրակացության, վոր այդ-
պիսի կանոնով պիտի ղեկավարվեն բոլոր հանրապետու-
թյունների դատավորները:

Այն հանգամանքը, վոր դատական նիստը ղեկավարում

1 Հայկական ԽՍՀ Քաղ. Դատ. Որենսդրում նույնպես նման նորմա-
գոյություն չունի: Խմբ.:

և նիստում նախագահող դատավորը, ամենևին չի նշանա-
կում, վոր ժողովրդական ատենակալները բավականաչափ
ակտիվ չեն դատավարության ժամանակ: ԽՍՀՄ-ում դա-
տարանը կոլեզիալ է, ուստի և կոլեզիալ պիտի լուծվեն
վոչ միայն այն հարցերը, վոր վերջին հաշվով դատարանը
լուծում է դատական վճռում, այլև այն բոլոր հարցերը,
վորոնց դատարանը հանդիպում է գործի քննության ըն-
թացքում: Այն ամենը, վոր թեկուզ վորևէ առնչություն
ունի գործի հանգամանքների հետ, ապացույցներ հավաքե-
լու, հետազոտելու հետ և այլն, այդ ամենը պետք է լուծի
դատարանը և վոչ թե նախագահողը: Նախագահողը միանձ-
նյա կերպով լուծում է միայն այն հարցերը, վորոնք կապ-
ված են դատարանի դահլիճում կարգ պահպանելու հետ և
այլն: Նախագահողը պարտավոր է հետևել, վոր դատավա-
րության մասնակիցները չչեղվեն դատաքննության հիմնա-
կան ուղղությունից: Նա պարտավոր է մի կողմ թողնել
քննվող գործին չվերաբերող հարցերը: Սակայն, յեթե կող-
մը պնդում է, որ ինակ, վկային տված հարցի վրա, այդ
դեպքում նախագահողը պետք է այդ հարցը դնի դատավոր-
ների քննությանը և ապա դատարանի վճռով միայն վերջ-
նական պատասխան տա: Ինքնըստինքյան հասկանալի չե,
վոր յերբ լուծվում է այս կամ այն ապացույցի թուլյատրե-
լիության հարցը, ապա այդ հարցը լուծել կարող է միայն
դատարանը կոլեզիալ ձևով: Նախագահողը պետք է դատա-
կան նիստի այնպիսի կարգ սահմանի, վորն ամեն կերպ
նպաստի ատենակալների՝ վորպես դատարանի իրավահա-
վասար անդամների նախաձեռնությանն ու ակտիվությանը,
իսկ մյուս կողմից՝ ապահովի դատական նիստի կանոնա-
վոր ընթացքը:

Գործի ճիշտ լուծման համար մեծ նշանակություն ունի
կողմերի, նրանց ներկայացուցիչների և դատավարության
մյուս մասնակիցների իրավունքների պահպանությունը
դատարանի կողմից: Որենքը (Քաղ. Դատ. Որ. հոդ. 5)
դատարանին պարտավորեցնում է դատավարության ժամա-
նակ ողնել թույլ կողմին, սակայն այդ չի նշանակում, թե
դատարանը կարող է վորևէ կողմին գերադասություն տալ

ի վրաս մյուս կողմի: Դատավորը պետք է հիշի նաև դատավարութեան հիմնական սկզբունքը—կողմերի հավասարութիւնը: Որինակ՝ հայցվորին ոգնութիւն ցույց տալով, վոր նա ապացուցցներ հավաքի հայրութիւնը հաստատելու համար, միտամանակ նախազահողը կամ ատենակալները ատենակեցիկով վերաբերմունք չպետք է ցույց տան դեպի պատասխանողը. ընդհակառակն, այդ ոգնութիւնը հայցվորին պետք է ցույց տրվի այն ձևով, վոր պատասխանողի համար ել պարզ լինի դատարանի որոյնեւորութիւնը, նրա ձգտումը՝ կողմերի իսկական փոխհարաբերութիւնները պարզելու:

Դատավորները սոված հարցերը պետք է շարադրված լինեն այնպիսի ձևով, վոր համոզմունք չառաջանա, թե դատավորն «արդեն գործը վճռել է»: Անթուլյատրելի յե, որին նակ, յերբ հայրութիւնը հաստատելու գործով դատավորը պատասխանողին ասում է. «Ինչո՞ւ յես համառում, արդեն պարզ է»: Այդպիսի հայտարարութիւնով, նախ, դատավորն արդեն արտահայտում է իր կարծիքը, և վորքան ել ըստ ելութեան ճիշտ լինի վճիռը, միշտ այն տպավորութիւնը կտա ցվի, թե վճիռը կանխորոշված էր, յերկրորդ՝ ըստ ձևի ել այդպես «դու»-ով դիմելն անթուլյատրելի յե:

Որենքը նախազահողի վրա պարտականութիւն է դնում կարգ պահպանել դատարանի դահլիճում: «Правда»-ն 1935 թվի նոյեմբերի 4-ի առաջնորդողում գրել է, վոր դատարանն իր արտաքին տեսքով ևս պետք է ազիտացիա մղի դեպի որենքը հարգանք ունենալու համար: Ուստի չափազանց կարևոր են այն պայմանները, վորոնց մեջ տեղի յե ունենում դատական նիստը: Պայմանները պետք է լինեն կուլտուրական ու գործնական, վորպեսզի դատավարութեան մասնակիցներն ու ներկա յեղողներն այն համոզմունքը կազմեն, վոր դատարանն ամենայն լրջութեամբ, հողատարութեամբ ու խնամքով է վերաբերվում իր քննած գործին: Ղրանով կրարձրանա նաև դատարանի հեղինակութիւնը:

Դատարանը պետք է պահանջի, վոր կողմերը, դատավարութեան մյուս մասնակիցները և դահլիճում ներկա յեղողները ևս սահմանված կարգը պահպանեն, կուլտուրա-

կան վարվեցողութիւնն ունենան և յենթարկվեն նախադահի կարգադրութիւններին:

Կարգը խանգարողներին նկատմամբ կարելի յե կիրառել ներգործութեան այն միջոցները, վոր որենքով վերապահված են նախազահողին: Ռ.Ս.Ս.Ս. Քաղ. Դատ. Որ. ընդհանրապես ներգործութեան վորեւ միջոց չի նախատեսում, տակայն այդ չի նշանակում, թե դատարանը չի կարող վորեւ միջոց ձեռք առնել կարգը խանգարողներին նկատմամբ: Այդ դեպքերում կիրառվում են Ք. Դատ. Որ. համապատասխան հոդվածները:

Դատական նիստի նախապատրաստական ստադիան: Այս ստադիայում դատարանը լուծում է գործը քննելու հնարավորութեան հարցերը և կատարում է բոլոր անհրաժեշտ նախապատրաստական գործողութիւնները, վորպեսզի գործի քննութիւնը նորմալ ընթանա:

Գործի քննութեան համար նշանակված ժամին դատարանը մտնում է դատական նիստի դահլիճը, դատական նիստը հայտարարում է բացված և հայտարարում է, թե վոր գործը պետք է քննվի:

Դատական նիստը բաց անելուց հետո դատարանը պետք է պարզի, թե կողմերից ու յերրորդ անձերից ո՞վ է ներկայացել դատական նիստին, և պետք է լուծի այն հարցը, թե հնարավոր է արդյոք գործը քննել չներկայացածների բացակայութեամբ: Այդ դեպքում, վորպես ընդհանուր կանոն, պետք է նկատի ունենալ, վոր քաղաքացիական դատավարութեան ժամանակ կողմերը պարտավոր չեն ներկայանալու գործի քննութեան (բացառութեամբ այն դեպքերի, վորոնց մասին կասվի ներքեում), սակայն կողմերին պետք է հայտնված լինի գործի քննութեան ժամանակի մասին, վորպեսզի նրանք կարողանան ոգտվել դատարանին բացատրութիւններ տալու իրենց իրավունքից և մասնակցութիւն ունենան գործի քննութեանը: Դրա համար ել չներկայացած կողմերի նկատմամբ դատարանն ամենից առաջ պետք է ստուգի, թե նրանք պահանջված ձևով ծանուցված են գործի քննութեան ժամանակի մասին, արդյոք գործում կա՞ն հետադարձ ծանուցազրեր՝ համապատասխան ստորագրութիւններով:

Յեթե գործի մեջ տվյալներ չկան այն մասին, վոր կողմերին հայտնված ե գործի քննութեան ժամանակը, այդ դեպքում դատարանը պարտավոր ե գործի քննութեանը հետաձգել:

Յեթե կողմերից մեկը չի ներկայացել, ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 98-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների համաձայն դատարանը կարող ե վորոշում կայացնել՝ գործը քննելու չներկայացված կողմի բացակայութեամբ: Այդ դեպքում պետք ե նկատի ունենալ, վոր կողմի չներկայանալը չի կարող ի վնաս ծառայել նրան, ուստի դատարանը պետք ե խնամքով ստուգել, թե հնարավոր ե արդոք գործը լսել չներկայացած կողմի բացակայութեամբ: Յեթե չներկայացած կողմը դիմում ե ուղարկել խնդրելով գործի քննութեանը հետաձգել ներկայանալու հնարավորութիւն չունենալու պատճառով, այդ դեպքում դատարանը չներկայանալու պատճառը հարգելի ճանաչելով՝ գործը հետաձգում ե:

ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 99-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների համաձայն՝ դատարանը կարող ե անհրաժեշտ համարել չներկայացած կողմի անձնական բացատրութիւնները. այդ դեպքում դատարանը գործի քննութեանը հետաձգում ե և այդ մասին տեղեկացնում ե չներկայացած կողմին: Յեթե կողմը չի ներկայանում այդ ծանուցումից հետո ևս, գործը քննվում ե նրա բացակայութեամբ, դատարանի հավաքած ապացույցների հիման վրա: Անձամբ բացատրութիւններ տալու համար կողմերին կանչել թույլատրվում ե նաև այն դեպքերում, յերբ գործին մասնակցում ե այդ կողմի ներկայացուցիչը: Թուրքմենական ԽՍՀ Քաղ. Դատ. Որենագիրքը, ի տարբերութիւն մյուս միութենական հանրապետութիւնների որենսդրելից, դատարանին իրավունք ե վերապահում գործը կարճելու, յեթե հայցվորը յերկրորդ անգամ ծանուցադիր ստանալուց հետո ել չի ներկայացել անձամբ բացատրութիւններ տալու և յեթե գործում յեղած տվյալները բավարար չեն կողմերի փոխհարաբերութիւնները պարզելու համար:

Ինչ հետևանք ե ունենում յերկու կողմերի՝ հայցվորի ու պատասխանողի չներկայանալը, յերբ տեղեկութիւն կա, վոր ծանուցադրերը հանձնված են նրանց: Այդ դեպքերում համաձայն ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 100-րդ հոդվածի և Ուզբեկական ԽՍՀ Քաղ. Դատ. Որ. 104-րդ հոդվածի, յեթե թեկուզ մեկ կողմից խնդիր չկա գործն իր բացակայութեամբ քննելու մասին, դատարանը գործի քննութեանը հետաձգում ե և յերկրորդ անգամ ծանուցադրեր ուղարկում: Յեթե կողմերը յերկրորդ անգամ ծանուցադրեր ստանալուց հետո ել չեն ներկայանում առանց հարգելի պատճառի, այդ դեպքում գործի վարուցիչը յենթակա յե կարճման:

ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 100-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների հիման վրա (բացի ԲՍՍՀ և Վր. ԽՍՀ) գործը կարճվելու դեպքում հայցվորին իրավունք ե վերապահվում հայցային վաղեմութեան վերաբերյալ սահմանված ժամկետի ընթացքում նորից հայց հարուցել ընդհանուր կարգով:

Ինչպես արդեն ասված ե, պատասխանողի ներկայանալը դատարանում պարտադիր չե: Սակայն առանձին դեպքերում որենքը պատասխանողի ներկայութիւնը պարտադիր ե համարում: Այսպես, ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 101-րդ հոդվածը սահմանում ե, վոր չունեոր և անաշխատունակ ամուսնու ոգտին ապրուստի միջոց (ալիմենտ) գանձելու գործով և աշխատավարձի գործերով դատարանը կարող ե պատասխանողի ներկայութիւնն անձամբ պարտադիր համարել, իսկ չներկայանալու դեպքում դատարանը կարող ե վորոշում կայացնել պատասխանողին բերման յենթարկելու մասին: Բերման յենթարկելու մասին վորոշում կայացնել կարելի յե միայն պատասխանողին՝ նրա ներկայութիւնը պարտադիր լինելու մասին տեղեկութիւն տալուց և բերման յենթարկելու մասին նախազգուշացնելուց հետո: Պատասխանողի ներկայութիւնը պարտադիր ե հարուցելուց հաստատելու և յերեխաների ապրուստի միջոց (ալիմենտ) գանձելու վերաբերյալ գործերի քննութեան ժամանակ (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 101-րդ հոդված): Այդ դեպքում

դատարանին իրավունք է վերապահվում պատասխանողին ազատել ներկայանալուց միայն այն դեպքում, յեթե պատասխանողը հեռու յե ապրում գործը քննող դատարանից և կամ այլ հարգելի պատճառներով: Չներկայանալու դեպքում դատարանը վորոշում է կայացնում պատասխանողին միլիցիայի միջոցով բերման յենթարկելու մասին: Անկախ բերման յենթարկելուց, յեթե պատասխանողն առաջին ծանուցազրով առանց հարգելի պատճառների չի ներկայանում, դատարանը կարող է նրան տուգանել մինչև 100 ռուբլի, իսկ յեթե գործի քննութունը հետաձգվում է, դատարանը կարող է ստորագրութուն վերցնել, մինչև գործի լուծումը ուրիշ վայր չմեկնելու մասին:

Դատախազի չներկայանալու դեպքում գործի քննութունը հետաձգվում է, միաժամանակ դատարանը դրա մասին տեղեկացնում է վերադաս դատախազին:

Այս կանոնը պետք է պահպանվի անկախ այն բանից, թե հայցը դատախազն է հարուցել, թե նա գործի մեջ է մտել արդեն իսկ դատավարության ժամանակ (Քաղ. Դատ. Որ. 2-րդ հոդ.) և կամ թե դատախազը դատավարությանը պետք է մասնակցի դատարանի վորոշման հիման վրա (ՌեճՍՆ Քաղ. Դատ. Որ. 12-րդ հոդվ. և մյուս միութենական հանրապետութունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածներ):

Վկայի կամ փորձագետի չներկայանալու դեպքում դատարանը պետք է լուծի այն հարցը, թե հնարավոր է արդյոք գործը քննել չներկայացած վկաների բացակայությամբ, վորի համար նախապես պետք է լսի ինչպես այն կողմի կարծիքը, վորի խնդրով կանչված է վկան, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների (պատասխանողի, յերրորդ անձերի) կարծիքը, ինչպես նաև գործին մասնակցող դատախազի յեզրակացութունը: Յեթե դատարանն անհնարին է համարում գործը քննել չներկայացած վկանների բացակայությամբ, վորոշում է գործի քննութունը հետաձգել:

Անկախ այն բանից, թե դատարանը հնարավոր կհամարի գործը լսել չներկայացած վկաների բացակայությամբ թե վոչ, դատարանը պետք է այդ վկաների նկատմամբ

ներգործության միջոցներ կիրառելու վորոշում կայացնի: ՌեճՍՆ Քաղ. Դատ. Որ. 129-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետութունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների համաձայն վոչ վոք իրավունք չունի դատարանում վկայելուց հրաժարվելու, բացառությամբ այն դեպքերի, յերբ պահանջվող փաստերը հաղորդելը կապված է պետական կամ ծառայության գաղտնիքը խախտելու հետ: Սակայն այդ դեպքում ևս վկան պարտավոր է ներկայանալ դատարան:

ՌեճՍՆ Քաղ. Դատ. Որ. 49-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետութունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների համաձայն առանց հարգելի պատճառի չներկայացած վկան դատարանի վորոշմամբ տուգանվում է Յ-ից մինչև 10 ռուբլի (Թուրքմենական ՌՍ Քաղ. Դատ. Որ. համաձայն՝ մինչև 25 ռ.), յերկրորդ անգամ՝ հարկադրական բերման և դրամական տուգանքի վերկնակի չափով:

Իսկ յեթե վկան ցուցմունքներ տալուց հրաժարվում է այնպիսի պատճառներով, վորոնք դատարանի կողմից անհարգելի յեն համարվում, այդ դեպքում տուգանվում է մինչև 50 ռուբլի (ՌեճՍՆ Քաղ. Դատ. Որ. 50-րդ հոդված, և մյուս միութենական հանրապետութունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Որենքը փորձագետների չներկայանալու հետևանքներ չի սահմանում, սակայն փորձագետներին վերաբերող որենքների ընդհանուր իմաստից պետք է զալ այն յեզրակացության, վոր չներկայացած փորձագետների բացակայությամբ գործը քննել չի կարելի: Սակայն այս ընդհանուր կանոնից կարող են բացառութուններ լինել: Յեթե փորձագետութունը կատարվել է մինչև դատական նիստը և փորձագետների ներկայացրած յեզրակացութունը պարզորոշ ու հստակ պատասխաններ է տալիս, դատարանը, կողմերի համաձայնության մասին անդեկանալով, կարող է վորոշել, վոր գործը լսվի չներկայացած փորձագետների բացակայությամբ: Սակայն պետք է նկատի ունենալ, վոր հաճախ փորձագետների յեզրակացութունները քննարկելիս ու դնա-

հատելիս կարող են առաջանալ անորոշություններ, փորձա-
գետների առաջ լրացուցիչ հարցեր դնելու անհրաժեշտու-
թյուն, ուստի միայն բացառիկ դեպքերում կարող է թույլ-
լատրվել, վոր գործը լավի փորձագետների բացակայու-
թյամբ:

Յեթե փորձագետը չի ներկայանում, կամ հրաժարվում
է յեզրակացություն տալ այնպիսի պատճառաբանությամբ,
վորը դատարանն անհարգելի յէ համարում, դատարանի
վորոշմամբ տուգանվում է մինչև 10 ուրբու չափով
(ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 51-րդ հոդ. և մյուս միութենա-
կան հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապա-
տասխան հոդվածները):

Կողմերի ներկայանալու հարցի կապակցությամբ ան-
հրաժեշտ է քննել նաև կողմերի ներկայացուցիչների
հարցը:

Համաձայն ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 12-րդ հոդվածի և
մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ.
Որ. համապատասխան հոդվածների՝ կողմերը կարող են
գործեր վարել դատարանում անձամբ կամ իրենց ներկա-
յացուցիչների միջոցով: Այդպիսով դատական նիստին կա-
րող է ներկայանալ կողմի լիազորած ներկայացուցիչը կամ
թե կողմը՝ իր ներկայացուցիչի հետ: Դատարանը չի կարող
մերժել ներկայացուցիչի մասնակցելը: Միայն կրոնական հա-
մոզմունքների համար զինվորական ծառայությունից ազա-
տելու վերաբերյալ գործերին ներկայացուցիչների մասնակ-
ցությունը չի թույլատրվում (ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 227-րդ հոդ. և մյուս միութեն. հանրապետ. Քաղ. Դատ.
Որ. համապ. հոդվ.):

Դատարանը պետք է ստուգի, թե ամյալ անձը կարո՞ղ է
ներկայացուցիչ լինել և ունի՞ր արդյոք համապատասխան
լիազորություններ:

Կողմերի ներկայացուցիչներ կարող են լինել՝ ա) ան-
զործունակների (անչափահասների, հոգեկան հիվանդների)
անունից նրանց որինական ներկայացուցիչները, այսինքն՝
ծնողները, խնամակալները, բ) գործունակների անունից՝
ազլոհատները (դատապաշտպանների կոլեգիայի անդամնե-
րը), բանվորների ու ծառայողների գործերով պրոֆմիտ-

թյունների լիազորները և այլ անձերը, վորոնց գործը քննող
դատարանի կողմից թույլատրվել է ներկայացուցիչ լինել
ամյալ գործով, իսկ պետական հիմնարկությունների, ձեռ-
նարկությունների, կոլտնտեսությունների, կոոպերատիվ և
այլ հասարակական կազմակերպությունների գործերով՝
նրանց ծառայողները, իրավախորհրդատուները, հաշվա-
պահները, ֆինանսական բաժինների վարիչները և այլն
(ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. հոդ. 15 և 16 և մյուս
միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ.
համապատասխան հոդվածները), գ) բացի այդ, դատարա-
նի նշանակած պաշտոնական ներկայացուցիչն այն դեպքե-
րում, յերբ հայց է հարուցված մի անձի դեմ, վորի բնա-
կավայրն անհայտ է:

Կողմերի ներկայացուցիչներ լինել չեն կարող՝ ա) 18
տարեկան հասակի չհասած անձերը, բ) դատարանի դատա-
վճռով իրավունքները սահմանափակած անձերը, գ) խնա-
մակալության տակ գտնվող անձերը, դ) դատապաշտպան-
ների կոլեգիայից վտարված անձերը, ե) դատավորները,
քննիչները, դատախազները (ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ.
26 և մյուս միութենական հանրապետությունների Քաղ.
Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 17-րդ հոդվածի և մյուս
միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ.
համապատասխան հոդվածների համաձայն կողմերի ներկա-
յացուցիչները պետք է ունենան համապատասխան լիազո-
րություններ: Որինական ներկայացուցիչների նկատմամբ
դատարանը պետք է միայն հավաստիանա—ծնողների նկատ-
մամբ՝ վոր նրանք իրոք իրենց ներկայացրած անչափահաս-
ների ծնողներն են, խնամակալների նկատմամբ՝ վոր նրանք
համապատասխան որդանների կողմից խնամակալ են նշա-
նակված (այդ դեպքերում պետք է գործին կցել խնամակալ
նշանակվելու վկայականի կամ վորոշման սրատճենը):

Իրավաբանները և այլ անձերը պետք է ներկայացնեն
նոտարական կարգով վավերացված հատուկ լիազորագիր:
Լիազորագիրը նոտարական վավերացման փոխարեն բան-
վորներն ու ծառայողները կարող են վավերացնել տալ այն

Հիմնարկում կամ ձեռնարկութունում՝ վորտեղ իրենց աշխատում են, գլխավորական ծառայողները՝ իրենց գործա- մասում, գյուղացիները (կոլտնտեսականներ ու մենատուն- տեսներ) գյուղխորհրդում: Որենքը թույլատրում է լիազոր- րագրի փոխարեն ներկայացուցչութունը ձևակերպել դատա- րանում արված բանավոր հայտարարությամբ, վոր մըտ- ցվում է դատական նիստի արձանագրության մեջ: Ներկայա- ցուցչին լիազորելու այդպիսի ձևակերպում հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ կողմը դատարան կներկայանա իր ներկայացուցչի հետ միասին:

Պրոֆմիութունների այն լիազորները, վորոնք հանդես են գալիս պաշտպանելու բանվորների ու ծառայողների շա- հերը, պետք է դատարանին վկայական ներկայացնեն այն մասին, վոր պրոֆմիութենական որգանն իրեն հանձնարա- րել է դատարանում հանդես գալ սովյալ գործով:

Պետական Հիմնարկների, ձեռնարկութունների, կոլ- տնտեսութունների, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպութունների ներկայացուցիչները պետք է ներ- կայացնեն լիազորագիր՝ տրված ղեկավարի ստորագրու- թյամբ և վսպիբացրած կնիքով:

ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 18-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետութունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների համաձայն՝ «լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս կատարելու բոլոր դատավարական գործողութունները, բացի գործը հաշտու- թյամբ վերջացնելուց, վեճը միջնորդ դատարանին հանձնե- լուց, հայցապահանջից հրաժարվելը մասամբ կամ լիովին ընդունելուց, լիազորութունն ուրիշ անձի հանձնելուց և փոզի համար գույք ստանալուց»: Վորպեսզի ներկայացու- ցիչը կարողանա վերոհիշյալ գործողութունները կատարել, լիազորագրի մեջ պետք է հասկապես նշված լինի այդ մա- սին: Այդ վերաբերում է նաև պրոֆմիութունների ներկա- ցուցչին, վորոնք պրոֆմիութունների վկայականնե- րով հանդես գալով՝ այդ գործողութունները կատարելու համար պետք է լիազորագիր ունենան նաև այն անձից, վո- րի շահերը պաշտպանում են: Այս կանոնը չի վերաբերում

ծնողներին ու խնամակալներին, բայց յեթե նրանք էլ իրենց հերթին գործի վարումը հանձնարարում են ներկայացուց- չի, ապա վերջիններին վրա տարածվում են ներկայացուց- չությանը վերաբերող բոլոր կանոնները:

Վերջապես, անհրաժեշտ է նշել, վոր յերբ փաստաթղթի կեղծ լինելու մասին վեճ է ծագում, այդ դեպքում կեղծիքի մասին հայտարարելու համար ներկայացուցիչն իրեն լիա- զորողից պետք է հատուկ լիազորագիր ստանա:

Կողմերի և դատավարության մյուս մասնակիցներին ներկայանալու հետ կապված բոլոր հարցերը պարզելուց և լուծելուց հետո, ինչպես նաև ներկայացուցիչներին լիազոր- րութուններն ստուգելուց հետո դատարանը կողմերին հարցնում է, թե նրանք վորեւ հայտարարութուն ունե՞ն հավյալ դատարանում կամ դատարանի տվյալ կազմով գոր- ծի քննությունը անհնարին լինելու մասին (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 102):

Գործի քննությունն անհնարին կարող է լինել հետևյալ դեպքերում. ա) յերբ ավելի նպատակահարմար է գործը քննել վոչ թե պատասխանողի աշխատանքի վայրում, այլ նրա բնակավայրում: Ինչպես հայտնի յե, Քաղ. Դատ. Որ. 25-րդ հոդվածի համաձայն հայցվորը կարող է դատարանն ընտրել իր հայեցողությամբ կամ ըստ պատասխանողի բնա- կավայրի, կամ թե ըստ նրա աշխատանքի վայրի. բ) յեթե հայցը հարուցված է ըստ պատասխանողի վերջին հայտնի բնակավայրի (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 26). յեթե դատական նիստին պատասխանողը ներկայանում է և միջ- նորդում, վոր գործը հանձնեն իր փաստական բնակավայրի դատարանի քննությանը, դատարանը կարող է այդպիսի միջնորդութունը բավարարել. գ) յեթե պարզվի, վոր սովյալ վեճը դատական քննության յենթակա չէ, կամ վոր մինչև դատարանում քննվելը հայցվորը պարտավոր եր պրետենդիտն կարողով գլմել պատասխանողին: Թեպետ և այդ հարցերը պետք է պարզարանվեն ու լուծվեն հայցադի- մումը ներկայացնելու ժամանակ, կամ թե գործի նախա- պատրաստման պրոցեսում, այնուամենայնիվ դրանք կարող են յերևան բերվել նաև գործի դատական քննության ժա-

մանակ, դատական նիստում: Այդ դեպքերում դատարանը վորոշում է կայացնում գործը կարճելու կամ դատաքննութիւնը կասեցնելու վերաբերյալ (Քաղ. Դատ. Որ. հոդ. 103, կետ «դ»):

Այդ նույն ստադիայում դատարանը լուծում է դատարանի տվյալ կազմով գործը լսելու անհնարինութեան հարցը, այսինքն՝ բացարկներէ հարցը: Նախ և առաջ նախադատողը պարտավոր է կողմերին բացատրել, վոր նրանք իրավունք ունեն բացարկ հայտնելու դատավորի, դատախազի, փորձագետներէ դեմ, և հետո միայն նրանց առաջ դնել այդպիսի հայտարարութիւններէ առկայութեան հարցը: Բացի այդ, դատավորներն իրենք՝ պարտավոր են իրենց նախաձեռնութեամբ ինքնաբացարկ հայտարարել, յետեւ դրա համար հիմքեր կան:

ՌԽՃՍՀ Քաղ. Դատ. Որ. 104-րդ հոդովածի և մյուս միութենական հանրապետութիւններէ Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդովածներէ համաձայն դատավորներին բացարկելու հիմք է հանդիսանում դատավորներէ շահագրգռվածութիւնը գործի յեղքի մեջ, նրանց հատուկ հարաբերութիւնները կողմերի նկատմամբ: Որենքը չի սահմանում, թե ինչ պիտի հասկանալ հատուկ հարաբերութիւններ ասելով, այլ թողնում է, վոր յուրաքանչյուր առանձին դեպքում դատարանը լուծի այդ հարցը: Համենայն դեպս բացարկի հիմք պետք է համարել դատավորի կամ ատենակալների ազդակցութիւնը կամ յուրայնութիւնը կողմերից մեկի հետ, կամ թե, թեկուզ և վոչ ազդակցական, բայց յայնպիսի հարաբերութիւնները, վորոնք կասկած են առաջացնում դատավորի անաչառութեան նկատմամբ, բարեկամական կամ, ընդհակառակն, անբարյացակամ հարաբերութիւնները: Բացարկի հիմք կարող են ծառայել նաև դատավորներէ ազդակցական հարաբերութիւններն իրար հետ:

Բացի այդ, բացարկի համար հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները. յետեւ գործի առթիւ կայացված վճիռը բեկանված է, ապա գործի նոր քննութեան ժամանակ վորպես դատավոր կամ ատենակալներ մասնակցել չեն կարող

րող այն անձերը, ովքեր գործի առաջին քննութեանը մասնակցել են վորպես դատավոր, վկա, փորձագետ, կողմերից մեկի ներկայացուցիչ, ինչպես և այն անձերը, ովքեր հանդես են յեկել վորպես դատախազ: Բացարկի յենթակա յեն նաև այն անձերը, ովքեր վորպես դատավորներ մասնակցել են գործի քննութեանը վերադաս դատարանում, յետեւ գործով կայացված վճիռը նրանց մասնակցութեամբ է բեկանված: Սակայն պետք է նկատի ունենալ, վոր ՌԽՃՍՀ Քաղ. Դատ. Որ. 246-րդ հոդովածի համաձայն վճիռը բեկանելու դեպքում գործը վերանայելու համար կարող է ուղարկվել դատարանի նույն կազմին: Այդ պետք է դրականապես նըշված լինի վերադաս դատարանի վորոշման մեջ¹:

ՌԽՃՍՀ և մյուս միութենական հանրապետութիւններէ Քաղ. Դատ. Որ. հայտնված բացարկներէ լուծման կարգը չեն սահմանում: Միայն Թուրքմենական ԽՍՀ Քաղ. Դատ. Որ. կարգ է սահմանված (հոդ. 124), վոր բոլոր դեպքերում հարցը լուծվում է դատարանի ամբողջ կազմով: ՌԽՃՍՀ Քր. Դատ. Որ. 47-րդ հոդովածը սահմանում է, վոր դատավորներից մեկի դեմ հարուցած բացարկը լուծում են մյուս դատավորները՝ բացարկվողի բացակայութեամբ և ձայների հավասարութեան դեպքում դատավորը համարվում է բացարկված: Իսկ յերբ բացարկ է հայտարարված դատարանի ամբողջ կազմի դեմ, հարցը լուծվում է դատարանի նույն կազմով:

Բացարկներ կարող են հայտնվել նաև դատախազի, փորձագետի, թարգմանչի և վկաների դեմ: Բացարկներէ հարցը լուծում է դատարանը:

Բացարկներէ հարցերը լուծելուց հետո դատարանը վկաներին հեռացնում է վկաների սենյակը՝ նախապես նրանց նախազգուշացնելով, վոր սուտ ցուցմունքներ տալու համար նրանք պատասխանատուութիւն են կրում:

Դրանից հետո դատարանը կողմերին բացատրում է, վոր նրանք կարող են գործը հաշտութեամբ վերջացնել:

¹ Հայկական ԽՍՀ Քաղ. Դատ. Որ. 246-րդ հոդովածի համաձայն վճիռը բեկանվելուց հետո գործի քննութիւնը հանձնարարվում է դատարանի այլ կազմին միայն: ԽՄԲ.:



իրավունք ունեն հարցեր տալու վկաներին, փորձագետներին, մասնակցելու փորձագիտութեանն ու տեղադնուութեանը և բացատրութեաններ տալու յուրաքանչյուր առանձին ապացույցի ըննութեան առթիւ, փոփոխելու իրենց պահանջների հիմունքները և այլն:

Մինչև գործն ըստ ելութեան ըննելուն անցնելը դատարանը պետք է լսի կողմերի միջնորդութեանները լրացուցիչ ապացույցների, լրացուցիչ վկաներ հրավիրելու, փորձագիտութեան նշանակելու, լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու մասին և այլն: Բացի այդ կարող են հարուցվել և այլ միջնորդութեաններ՝ պատասխանակիցներ, յերրորդ անձեր մասնակից անելու մասին, կամ թե հենց իրենց՝ յերրորդ անձերի միջնորդութեանները՝ գործի մեջ մտնելու մասին: Այդ հարցերը լուծելու համար դատարանը պետք է անպայման լսի մյուս կողմի կարծիքը, ինչպես և գործին մասնակցող դատախազի յեզրակացութեանը: Այդ հարցերի լուծման ժամանակ կարող է գործի ըննութեանը հետաձգելու անհրաժեշտութեանն առաջանալ:

Կողմերն այդ հարցերը հարուցելու իրավունքից զուրկ չեն նաև այն դեպքում, յեթե գործի նախապատրաստման ընթացքում նրանց միջնորդութեանները մերժված են յեղել:

Գործի քննութեան ըստ ելութեան: Ապացույցների գնումը: ՌԽՅՍՀ Քաղ. Դատ. Որ. 105-րդ հոդվածը սահմանում է, թե գործի ըննութեանն սկսվում է նրանով, վոք դատարանը կողմերին առաջարկում է բացատրութեաններ տալ՝ հիմնվելով գործին կցած իրենց բոլոր ապացույցների վրա: Նույնպիսի կարգ է սահմանված նաև Ադր. ԽՍՀ Քաղ. Դատ. Որ. 105-րդ հոդվածով¹: Իսկ մյուս միութենական հանրապետութեանների որենսդրվածով այլ կարգ է սահմանված:

Գործի ըննութեանն սկսվում է նախագահողի կամ դատարանի անդամներից մեկի կողմից գործի մասին զեկուցելուց, վորից հետո կողմերը բացատրութեաններ են տալիս:

Փորձը ցույց է տալիս, վոր ավելի նպատակահարմար

¹ Հայկական ԽՍՀ Քաղ. Դատ. Որենսդր. 105 հոդվածը նույնպես այդպիսի կարգ է սահմանում: (Սժբ.):

ու ճիշտ է այն կարգը, յերբ գործի ըննութեանն սկսվում է գործի վերաբերյալ զեկուցում տալով: ՌԽՅՍՀ համարյա բոլոր դատարաններում փորձը սահմանել է գործի վերաբերյալ զեկուցելու կարգը:

Սակայն հարկավոր է նկատի ունենալ, վոր գործի վերաբերյալ զեկուցումն ոգտակար կլինի միայն այն ժամանակ, յերբ նա որյեկտիվորեն շարադրում է վեճի ելութեանը և կողմերի ներկայացրած ապացույցները: Չեկուցողը պետք է շարտահայտի իր կարծիքը այս կամ այն կողմի առարկութեանների ճշտութեան մասին:

Գործի վերաբերյալ զեկուցումից հետո կողմերը բացատրութեաններ են տալիս:

Նախքան ապացույցների ըննութեանն հարցին անցնելը՝ անհրաժեշտ է կանոչ առնել ՌԽՅՍՀ Քաղ. Դատ. Որ. 106-րդ հոդվածի վրա: Այդ հոդվածի իմաստից հետևում է, վոր կողմերը պետք է մինչև գործի ըննութեանն սկսելը ներկայացնեն իրենց ունեցած բոլոր ապացույցները: Իսկ գործի ըննութեանն սկսելուց հետո ապացույցներ ընդունել թույլատրվում է միայն այն դեպքում, յեթե դատարանը հարգելի կճանաչի այն պատճառները, վորոնց հետևանքով կողմերը չեն կարողացել ժամանակին ներկայացնել այդ ապացույցները:

Ի տարբերութեան Քր. Դատ. Որենսդր. բոլոր միութենական հանրապետութեանների Քաղ. Դատ. Որենսդր. բնութեանն այնպիսի հոդվածներ, վորոնք սահմանել են ապացույցների ըննութեան կարգը, այսինքն այն, թե ինչ հետևողականութեամբ, ինչ կարգով պետք է հարցաքննվեն վկաները, փորձագետները և այլն: Սակայն այդ չի նշանակում, թե քաղաքացիական դատավարութեան պրոցեսում այդպիսի կարգ չպետք է լինի. կամ չկա:

Դատական պրակտիկան ապացույցները ըննելու հետևյալ կարգն է սահմանել: Կողմերի բացատրութեանները լսելուց հետո դատարանը նրանց առաջարկում է իրենց կարծիքը հայտնել ապացույցները ըննելու կարգի մասին: Յեթե դատախազը մասնակցում է գործին, ապա լսվում է նաև նրա յեզրակացութեանը: Դրանից հետո, տվյալ գործի

կոնկրետ պայմաններին համապատասխան, դատարանն իր փորձմամբ տահմանում է այն կարգը, վորը կնպաստեր գործի բոլոր հանգամանքները լավագույն կերպով պարզելուն:

Նախ պետք է հարցաքննվեն հայցվորի վկաները, ապա՝ պատասխանողի վկաները: Բարդ գործում, յերբ հայցը բաղկացած է մի քանի պահանջից, որինակ՝ աշխատանքից ազատելը ճիշտ չհամարելը, թակամա գործալքման, արտաժամյա աշխատանքի և չողտադործած արձակուրդի համար վարձատրություն բռնադանձելը, այդպիսի դեպքում դատարանը կարող է նախ քննել հայցվորի ու պատասխանողի ապացույցները մեկ պահանջի նկատմամբ, իսկ հետո նույն կարգով նաև մյուս պահանջների նկատմամբ: Բայց հիմնական կանոնը մնում է անփոփոխ. նախ հարցաքննվում են հայցվորի վկաները, իսկ հետո՝ պատասխանողի:

Նախագահողը վկային առաջարկում է պատմել, թե նրան ինչ է հայտնի տվյալ գործի վերաբերյալ, վորից հետո կարող են հարցեր արվել: Ըստվորում, յեթե հարցաքննվում է հայցվորի վկան, ապա առաջինը հարցեր տալիս է հայցվորը, իսկ հետո՝ պատասխանողը, իսկ յեթե վկան կանչված է պատասխանողի խնդրանքով, այդ դեպքում առաջինը հարցեր տալիս է պատասխանողը, իսկ հետո՝ հայցվորը: Յեթե գործին մասնակցում է դատախազը, վորը հայց չի ներկայացրել, նա հարցեր տալիս է կողմերից հետո:

Յուրաքանչյուր կողմ կարող է վկային հարցեր տալ՝ լրացնելու և պարզաբանելու համար այն պատասխանները, վոր տվել է նա մյուս կողմերի հարցերին:

Նախագահողն ու դատարանի անդամները վկաներին հարցաքննում են այն ժամանակ, յերբ կողմերը վերջացրել են նրանց հարցեր տալը, ինչպես նաև կարող են հարցեր տալ ամեն րոպե՝ պարզաբանելու և լրացնելու համար այն պատասխանները, վոր վկան տալիս է կողմերի հարցերին:

Բացի այդ, վկաների հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր հարցաքննությունից առաջ յուրաքանչյուր վկա պետք է նախադուշացված լինի, վոր

նա քրեական պատասխանատվություն է կրում սուտ ցուցմունքներ տալու համար (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 132-րդ հոդվ. և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները): Յուրաքանչյուր վկա հարցաքննվում է առանձին (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 133), իսկ հարցաքննված վկաները պետք է դատական նիստի դահլիճում մնան մինչև գործի քննությունն ավարտվելը: Վկան նիստի դահլիճից ժամանակավորապես հեռանալ կարող է միայն դատարանի թույլտվությամբ և կողմերի համաձայնությամբ:

Ցուցմունքներ տված վկան կարող է յերկրորդ անգամ հարցաքննվել՝ իր հայտարարության համաձայն, կողմերի խնդրանքով կամ դատարանի նախաձեռնությամբ (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 137): Դատարանը կարող է նշանակել նաև վկաների առերեսում՝ նրանց ցուցմունքների հսկասությունները պարզելու համար (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 138), առերեսում կարելի յե նշանակել վկայի ու կողմի հետ:

Ինչոր դեպքերում, յերբ փորձագետները պետք է կանչվեն դատական նիստին, նրանք նիստի դահլիճում ներկա յեն լինում գործի քննության ամբողջ ընթացքում, իրավունք ունեն ծանոթանալու գործի նյութերին, հարցեր տալու կողմերին, վկաներին և այլն: Փորձագիտություն կատարած փորձագետի բացակայությամբ գործի քննությունը կարող է տեղի ունենալ առանձին դեպքերում, յերբ փորձագետի յեզրակացությունները հիմնված են լաբորատորական հետազոտությունների վրա և բացատրություններ չեն պահանջում, որինակ՝ յերբ հայրությունը հաստատելու հայցով կատարված է հայցվորի, պատասխանողի և յերեսխայի արյան հետազոտություն և յեզրակացության մեջ նշված է, վոր բոլոր յերեքի արյան առանձնահատկությունների հետևանքով չի կարելի յեզրակացություն անել, թե պատասխանողի հայրությունը բացառվում է, ինչպես և բացառվում է այն յենթադրության հնարավորությունը, թե պատասխանողը կարող է հայր ճանաչվել: Այդ դեպքում վոչ մի անհրաժեշտություն չկա փորձագետին դատական նիստը կանչելու:

Մինչև դատական նիստը կամ դատական նիստի ժամանակ փորձագիտութուն կատարելիս դատարանի վորոշման մեջ պետք է նշված լինեն այն հարցերը, վորոնց փորձագետը պետք է պատասխանի: Այդ հարցերը կարող են առաջադրել վոչ միայն դատարանը, այլև կողմերը: Դատարանը կարող է մերժել կողմերի տված այս կամ այն հարցը: Յեթե դատարանը գտնի, վոր տվյալ հարցը գործի համար նշանակութուն չունի, պետք է իր մերժումը պատճառաբանի:

ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 155-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները սահմանում են, վոր փորձագետներն իրենց յեզրակացությունները տալիս են բանաձևով կամ գրավոր՝ դատարանի հայեցողությամբ: Բանաձևով յեզրակացությունները մտցվում են արձանագրության մեջ և ստորագրվում փորձագետի կողմից: ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 175-րդ հոդվածը սահմանում է, վոր փորձագետներն իրենց յեզրակացությունները միշտ տալիս են գրավոր ձևով: Այդ կանոնը պետք է ավելի նպատակահարմար համարել, վորովհետև, անկասկած, փորձագետն իր յեզրակացությունն ավելի լավ կշարադրի, քան քարտուղարը:

Փորձագետի հարցաքննությունն սկսվում է նրա յեզրակացությունը հրապարակելուց: Յեթե գործին մասնակցել են միջանի եքսպերտներ և տարբեր յեզրակացություններ են տվել, այդ դեպքում հրապարակվում է յուրաքանչյուր փորձագետի յեզրակացությունը: Դրանից հետո կողմերն ու պատասխանները կարող են փորձագետներին հարցեր տալ, վորպեսզի պարզաբանեն ու լրացեն նրանց տված յեզրակացությունները և այդ յեզրակացության հիմունքները: Հարցերին տրված պատասխաններն արձանագրվում են:

Դատարանը կաշկանդված չէ փորձագիտության յեզրակացություններով, նա կարող է նշանակել նոր փորձագիտություն, կամ թե իր վորոշումով ժխտել փորձագետների յեզրակացությունները: Այդ դեպքերում դատարանը պարտավոր է պատճառաբանել իր անհամաձայնությունը փորձագետների յեզրակացություններին:

Դրավոր ապացույցների հետազոտությունը կատարվում

է նրանց լիակատար կամ մի մասի հրապարակումով և լսելով կողմերի բացատրությունները՝ գործում յեղած ինչպես հրապարակված, յայնպես էլ չհրապարակված փաստաթղթերի նկատմամբ:

Պարտադիր կարգով հրապարակման յենթակա յեն այն փաստաթղթերը, վոր ներկայացրել է մեկ կողմը և հայտնի չեն մյուս կողմին, ինչպես և այն փաստաթղթերը, վոր անմիջականորեն դատարանն ինքն է պահանջել: Հավասարապես փաստաթղթերը հրապարակման յենթակա յեն նաև կողմի միջնորդությամբ, կամ յերբ փաստաթղթի առթիվ կողմերի միջև վեճ է ծագել նրա ճշգրիտ բովանդակության կամ բովանդակության իմաստի վերաբերյալ, փաստաթղթի բովանդակության կամ նրա առանձին մասերի մեկնաբանություն վերաբերյալ: Դատարանը կարող է իր նախաձեռնություն փաստաթուղթը հրապարակել և կողմերին առաջարկել՝ բացատրություններ տալու նրա բովանդակության կամ նշանակության վերաբերյալ: Յեթե գործում կան չհրապարակված փաստաթղթեր, դատարանը պարտավոր է ստուգել, թե կողմերը գիտե՞ն նրանց մասին:

Յեթե փաստաթղթերը դատարան ներկայացնելը դժվարություններ է հետ է կապված, որինակ՝ նրանց շատ լինելու հետևանքով, կամ թե այն պատճառով, վոր նրանց մի մասը միայն գործի համար նշանակութուն ունի, այդ դեպքում դատարանը կարող է պահանջել, վոր ներկայացվեն համապատասխան կարգով վավերացված քաղվածքներ կամ փաստաթղթերի ստուգում կատարել տեղում (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. հոդ. 144 և մյուս միութենական հանրապ. Քր. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Ներկայացված կամ պահանջված փաստաթղթերի առթիվ կարող են հայտարարություններ արվել նրանց կեղծության վերաբերյալ:

ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 148-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները սահմանում են, վոր յեթե կասկածելի փաստաթուղթ ներկայացրած կողմը, կամ այն կողմը, վորի ոգտին փաստաթուղթը պահանջվել է, հրաժարվի այդպիսի փաստաթուղթն ոգտագործելուց, վորպես

գործին վերաբերող ապացույց, այդ դեպքում նույն կողմը կարող է դատարանին խնդրել, վոր գործը քննվի այլ ապացույցների հիման վրա: Սակայն պրակտիկայում այնպես է լինում, վոր գործին վերաբերող այդ փաստաթուղթը միակ ապացույցն է հանդիսանում կամ թե քսանց այդ փաստաթղթի կողմերի իսկական փոխհարաբերությունը պարզել դժվար, նույնիսկ անհնարին է լինում, թեկուզ և ուրիշ ապացույցներ լինելու դեպքում: Այդ դեպքերում դատարանը կարող է մերժել փաստաթուղթը վորպես ապացույց վերացնելը և կարող է այդ փաստաթղթի ստուգում կատարել:

Դատարանը նմանապես պետք է ստուգի փաստաթղթի կեղծությունը, յեթե այդ փաստաթուղթը ներկայացնող կողմը, կամ այն կողմը, վորի ոգտին այդ փաստաթուղթը պահանջել է դատարանը, չի հրաժարվում այդ փաստաթուղթը վորպես ապացույց ոգտագործելուց, այլ կերպ ասած՝ ժխտում է կեղծության մասին յեղած հայտարարությունը: Այդ դեպքում փաստաթղթի կեղծության մասին հայտարարություն անող կողմը պարտավոր է ապացույցներ ներկայացնել փաստաթղթի կեղծության մասին, իսկ դատարանը պարտավոր է ստուգել փաստաթղթի իսկությունը (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 149 և 150-րդ հոդվածները և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Յեթե դատարանը համոզվում է, վոր փաստաթուղթը կեղծ է, այն հանում է ապացույցների շարքից և մեղավորների դեմ քրեական հետապնդում է հարուցում: Գործի հանգամանքներին նայած՝ քննվող գործի վարույթը կարող է կասեցվել մինչև քրեական գործի քննությունը (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 151-րդ հոդված և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Այն դեպքերում, յերբ դատարանն անհրաժեշտ կգտնի անմիջականորեն ծանոթանալու առարկայի վիճակին, իրերի դրությունը, շենքերի վերապլանավորմանը, այն փաստաթղթերին, վորոնք դատարան ներկայացնել չեն կարողացել

և այլն, — կատարվում է տեղադնություն: Ավելի նպատակահարմար է տեղադնություն կատարել դատարանի ամբողջ կազմով, վորպեսզի դատարանի ամբողջ կազմը, վորը գննություն տվյալներին հիման վրա վճիռ պիտի կայացնի, կարողանա անմիջականորեն ծանոթանալ գննվելիք ապարկաներին:

Միայն բացառիկ դեպքերում, յերբ անհնարին է գննությունը կատարել դատարանի ամբողջ կազմով, այն կարող է կատարել անհատապես նախագահողը:

Տեղադնություն կատարելու մասին պետք է տեղեկացվեն կողմերը և գործին մասնակցող դատախազը: Յեթե նրանք ներկայանում են, մասնակցում են գննությանը (ՌՆՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 161-րդ հոդված և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

Յեթե գործին փորձագետ է մասնակցում, նա ևս կանչվում է տեղադնությանը, այս դեպքում նրա մասնակցությունը պարտադիր է:

Տեղադնություն կատարելիս կազմվում է արձանագրություն, վորի մեջ գրվում է ամբողջ գննության նկարագրությունը, կատարած բոլոր գործողությունները, գննության ժամանակ ներկա յեղած անձերի հայտարարությունները: Արձանագրությունն ստորագրում են գննության ժամանակ ներկա յեղած բոլոր անձերը: Արձանագրությունը պետք է կցվեն տեղում կազմած պլանները, գծագրությունները, նկարահանումները և այլն: Իսկ յեթե այդ փաստաթղթերը նախորդ կազմված են յեղել, իսկ տեղում միայն համեմատվել (ստուգվել) են, ապա դրանք ևս պետք է կցվեն արձանագրությանը, վորի մեջ պետք է նշված լինեն համեմատության արդյունքները:

Տեղադնության արդյունքները (արձանագրությունն ու նրան կցված բոլոր փաստաթղթերը) պետք է հրապարակվեն դատական նիստում:

Բոլոր միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որենագրքերում իրեղեն ապացույցները նախատեսված չեն վորպես ապացույցի տեսակ քաղաքացիական գործե-

րում, սակայն դատական պրակտիկայում դրանք հանդիպում են:

Իրեղեն ապացույցներ լինելու դեպքում դրանք պետք է դատական նիստում գննվեն դատարանի և կողմերի կողմից: Ձևնության արդյունքները և այդ առթիվ կողմերի արած հայտարարութունները պետք է մտցվեն դատական նիստի արձանագրության մեջ:

Յեթե առանձին դատական գործողություններ կատարվել են դատական նիստից դուրս, ապացույցներն ապահովելու կարգով կամ գործը քննող դատարանի հանձնարարությամբ կատարել և ուրիշ դատարան, — առանձին հանձնարարություն, վկայի, կողմի, փորձագետի հարցաքննություն, տեղադնություն, ինչպես և այն դեպքում, յերբ արդեն առաջուց հարցաքննված վկայի ներկայանալն անհնարին է, ապա այդ ակտերն ու արձանագրությունները պետք է հրատարակվեն դատական նիստում, ըստվորում, դրանց առթիվ կողմերը կարող են տալ իրենց բացատրությունները: Այդպիսի փաստաթղթերի հրատարակման մասին պետք է հատկապես նշված լինի դատական նիստի արձանագրության մեջ:

ՌեժՍՆ Քաղ. Դատ. Որ. 108-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները սահմանում են, վոր «դատարանը, գործը բավականաչափ պարզաբանված համարելով՝ դադարեցնում է դատախոսությունը և անցնում է վճիռ կայացնելուն»: Որենքի այսպիսի ընդհանուր ձևակերպումը հաճախ պրակտիկայում ճիշտ չի մեկնարանվում. հասկանում են այն իմաստով, թե դատարանն իրավունք ունի ուզած րոպեյին դադարեցնելու ապացույցների դնությունը, յեթե նրան «գործը բավականաչափ պարզված» է թվում: Դեռ ամբլին. յերբեմն որենքն այդպես հասկանալու հետևանքով դատարանը կանչված վկաների հարցաքննությունը դադարեցնելով՝ անցնում է վճիռ կայացնելուն:

Այդպիսի պրակտիկան վոչ միայն որենքից չի բղխում, այլև մի կողմից հակասում է կողմերի իսկական իրավունքների ու փոխհարաբերությունների պարզաբանման

խնդիրներին (Քաղ. Դատ. Որ. հոդ. 5) և մյուս կողմից՝ խախտում է կողմերի իրավունքները պրոցեսում:

Իհարկե, դատական նիստում այս կամ այն ապացույցը, ուրեմն և նրա գննությունը թույլատրելի կախված է նրանից, թե դատարանը կգտնի՞ արդյոք, վոր նրանք նշանակություն ունեն գործի համար (Քաղ. Դատ. Որ. հոդ. 119): Դատարանն այս կամ այն հանգամանքը կարող է համարել այնքան հանրահայտի, վոր ապացուցելու կարիք չի գգում (Քաղ. Դատ. Որ. հոդ. 120), սակայն դատարանը միշտ պետք է չիչի, վոր ապացույցներ բերել թույլ չտալը, կամ վկաների հարցաքննությունը դադարեցնելը պետք է պատճառաբանված լինի: Յեղնելով դրանից՝ ճիշտ պետք է համարել դատական պրակտիկայով սահմանված այն կարգը, յերբ ապացույցները գննելը վերջացնելու հարցը, ինչպես և քրեական գործի դատաքննությունը դադարեցնելու հարցը, հատուկ քննության նյութ է հանդիսանում և դատարանը դրա մասին հատուկ վորոշում է կայացնում: Այդ տեսակետից յերբ գործին վերաբերող բոլոր ապացույցները գննված են, դատարանը կողմերին հարց է տալիս, թե նրանք ինչով կցանկանային լրացնել գործի քննությունը: Իրանից հետո դատարանը վորոշում է կայացնում ապացույցների գննումը վերջացնելու մասին:

Կողմերի վիճարանությունը: Յեղնելով այն բանից, վոր որենքում ուղղակի ցուցում չկա կողմերի վիճարանության մասին, հաճախ անճիշտ հետևություն է արվում, թե քաղաքացիական դատափարության մեջ հարկ չկա, կամ նույնիսկ անթույլատրելի յե կողմերի վիճարանությունը: Այդպիսի հետևությունը վոչ միայն որենքից չի բղխում, այլև հակասում է առողջ գատողությանը: Յերբ դատարանը կողմերի հետ միասին բոլոր ապացույցները գննելու ուղղությամբ մեծ ու բարդ աշխատանք է կատարել, դրանից հետո վոչ միայն կողմերի, այլև դատարանի համար խիստ ոգտակար է, վոր կողմերն իմի ամփոփեն, դատարանին հաղորդեն, թե իրենք վոր փաստերն են համարում հաստատված, վոր փաստերն իրենց կարծիքով հաստատված չեն և վորոնք են իրենց իրավաբանական հե-

տուությունները, այսինքն՝ ինչի՛ հիման վրա նրանք հայցը համարում են բավարարման յենթակա կամ վոչ յենթակա:

Կողմերի վիճաբանության համար պետք է սահմանափակեալ կարգը. առաջինն արտահայտվում է հայցվորը, ինչպես և յերրորդ անձը՝ հայցվորի կողմից, իսկ հետո պատասխանողը և նրա կողմից մասնակցող յերրորդ անձը: Յեթե հայցվորին իր ճառից հետո հնարավորություն է տրվել կրկին անգամ արտահայտվելու (ռեպլիկա), ապա կողմերի հավասարության գորությամբ պատասխանողին ևս պետք է հնարավորություն տրվի պատասխանելու: Յեթե գործին մասնակցում է մի յերրորդ անձ ինքնուրույն հայցապահանջով, ապա նրա ճառը լսվում է հիմնական կողմերի՝ այսինքն հայցվորի և պատասխանողի վիճաբանությունից հետո, բայց վերջիններիս պետք է իրավունք տրվի առարկելու, վորովհետև և՛ հայցատերը, և՛ պատասխանողն ինքնուրույն հայցապահանջ ունեցող յերրորդ անձի նկատմամբ պատասխանող կողմ են հանդիսանում:

Հարկավոր է նկատի ունենալ նաև այն, վոր կողմի ներկայացուցչի առկայությունը պրոցեսում նրան չի զբրկում ներկայացուցչի ճառից հետո դատարանին բացատրություններ տալու իրավունքից, յեթե կողմն այդ ցանկանա: Կարող է լինել և ուրիշ կարգ, վոր նախ արտահայտվի կողմը, հետո միայն նրա ներկայացուցչի:

Ինչ վերաբերում է դատախազին, պետք է տարբերել յերկու դեպք. 1) յերբ դատախազը հայց է հարուցել և 2) յերբ դատախազը գործի մեջ է մտել առանց ինքնուրույն հայց հարուցելու, կամ թե նրան գործին մասնակից է արել դատարանը՝ Քաղ. Դատ. Որ. 12-րդ հոդվածի կարգով: Առաջին դեպքում դատախազը, պրոցեսում ոգտվելով կողմի իրավունքից, վորպես հայցվոր վիճաբանության ժամանակ հանդես է գալիս առաջինը, յերկրորդ դեպքում նա իր յեզրակացությունը տալիս է կողմերի վիճաբանությունից հետո:

Վիճաբանության ժամանակ կողմերը կարող են հիմնվել միայն այն ապացույցների վրա, վորոնք կան գործի մեջ և քննվել են դատական նիստում: Յեթե կողմերի վիճաբանությունների ժամանակ նոր ապացույցներ քննելու

անհրաժեշտություն է առաջանում, դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ կարող է վորոշել՝ վերսկսել ապացույցների գննությունը:

Ապացույցների նոր գննությունն ավարտելուց հետո նորից ընդհանուր կարգով տեղի յե ունենում կողմերի վիճաբանություն:

Այդպիսի կարգ պահպանվում է նաև այն դեպքում, յեթե նոր ապացույցների հարցը ծագել է դատավորների խորհրդակցության ժամանակ, յորհրդակցական սենյակում:

Կողմերի վիճաբանությունից հետո նախագահը հայտարարում է, վոր դատարանը գնում է յորհրդակցական սենյակը՝ վճիռ կայացնելու, և այդ ժամանակամիջոցում նիստը հայտարարվում է ընդհատված:

Դատարանի վնախի հրապարակումը: Վճռի հրապարակումը հանդիսանում է վերջին, յեզրափակիչ գործողությունը, վորով ավարտվում է քաղաքացիական գործի դատաքննությունը:

Այդ դատավարական մոմենտը չի կարելի վորևէ ձևական բան համարել: Վճռի հրապարակումը լուրջ ակտ է, ուստի այն պետք է կատարել այնպիսի պայմաններում, վոր համապատասխանի հանրապետության անունից հրապարակվող վճռի հեղինակությանը: Դատարանը վճիռը հրապարակում է հոտնկայս, և դատարանի դահլիճում յեզոզները վորոշումը լսում են հոտնկայս: Վճիռը կարգում է նախագահը պարզորոշ, հստակ, բարձր ձայնով, այնպես, վոր բոլոր ներկա յեզոզները կարողանան բովանդակությունը յուրացնել: Վճիռը հրապարակելուց հետո նախագահը պետք է կողմերին հարցնի, թե նրանք հասկացա՞ն վճիռը, և, յեթե անհրաժեշտ է, պետք է վճռի եյությունը պարզաբանի: Բացի այդ նախագահը պետք է անպայման կողմերին բացատրի, վոր նրանք իրավունք ունեն վճիռը զանդատարկելու և դանդատ տալու կարգը: Դրանով դատական նիստը համարվում է ավարտված:

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԵՏԱԶԳՈՒՄԸ ՅԵՎ ԳՈՐԾԻ ԳՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒՄԸ

Գործի քննութիւնը հետաձգելիս դատարանը պետք է իր վորոշման մեջ ճշգրիտ նշի այն պատճառները, վորոնց հետեանքով անհրաժեշտ է յեղել գործը հետաձգել, և այն միջոցառումները, վոր անհրաժեշտ են հետեյալ նիստում գործի քննութիւնն ապահովելու համար:

ՌԽՅՄՀ Քաղ. Դատ. Որ. 107-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները կանոն են սահմանում, վոր դատարանը գործը հետաձգելիս պետք է ըստ հնարավորութեան նշանակի գործի քննութեան նոր նիստի որը: Իրականում հաճախ դատարանն այդ կանոնը չի պահպանում, մինչդեռ այդ կանոնի պահպանումը հնարավորութիւնն է տալիս ներկայացած կողմերին ու վկաներին հայտնելու գործի քննութեան որվա մասին և ազատում է ծանուցագրեր ուղարկելու անհրաժեշտութիւնից:

ՌԽՅՄՀ Քաղ. Դատ. Որ. նույն 107-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները (բացի ԲՍՄՀ, ԱդրՄՀ, Թուրք. ԽՍՀ) սահմանում են, վոր գործի քննութիւնը հետաձգելիս դատարանը պարտավոր է ներկայացած վկաներին հարցաքննել, նույն վկաներին յերկրորդ անգամ կանչել թույլատրելով է միայն առանձնապես բացառիկ դեպքերում: Այս կանոնի նպատակն է աշխատավորներին իզուր տեղը չկտրել առորյա աշխատանքից: Սակայն պետք է նկատի ունենալ, վոր բանավորութեան, անընդհատութեան և անմիջականութեան սկզբունքները պահանջում են, վոր այն դատավորները, վորոնք պետք է գործի մասին վճիռ կայացնեն, պետք է անմիջականորեն իրենք ծանոթանան գործին վերաբերող բոլոր ապացույցներին: Բացի այդ, դատարանի հետեյալ նիստում գործը քննելու ժամանակ կարող է անհրաժեշտութիւնն առաջանալ, վոր արդեն հարցաքննված վկաները կրկին հարցաքննվեն, կամ թե վկաների միջև առերեսում կատարել: Վերջապես, պետք է նկատի ունենալ

նաև այն, վոր յեթե գործի քննութիւնը հետաձգվում է կողմերից մեկի չներկայանալու հետեանքով, ապա կողմի բացակայութեամբ վկաների հարցաքննութիւնը նրա իրավունքի խախտումն է հանդիսանում, քանի վոր նա իրավունք ունի մասնակցելու ապացույցների քննութեանը: Ուստի գործի քննութիւնը հետաձգելով՝ դատարանը պետք է մանրամասն քննարկի, թե կարելի՞ է յե արդյոք ներկայացած վկաներին հարցաքննել առանց հետեյալ նիստին կանչելու նրանց, և այդպիսի հարցաքննութիւնն պիտի կատարվի միայն բացառիկ դեպքերում:

Գործի հետաձգումից պետք է տարբերել գործի վարույթի առկայումը: Առաջին դեպքում գործի քննութիւնը հետաձգվում է մի ուրիշ որվա, ուրիշ դատական նիստի, յերկրորդ դեպքում վարույթն առկայվում է, այսինքն, գործին վերաբերող վոչ մի գործողութիւն չի կատարվում մինչև որենքով նախատեսված դեպքը վրա հասնելը:

ՌԽՅՄՀ Քաղ. Դատ. Որ. 113-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների համաձայն դատարանը պարտավոր է գործի քննութիւնն առկայել հետեյալ դեպքերում. ա) կողմերից մեկի, կամ յերրորդ անձի մահանալու դեպքում, բ) այն դեպքում, յեթե անհրաժեշտ է կողմի նկատմամբ սահմանել խնամակալութիւն կամ դատարանում հայց հարուցելու և պատասխան տալու իրավունքի այլ սահմանափակում (յեթե գործի քննութեան ընթացքում կարգվի, վոր հայցվորը կամ պատասխանողը հոգեկան հիվանդ է կամ հիվանդացել է, և դրա հետեանքով դատավարական գործունակութիւնից չի ոգտվում. յեթե գործի քննութեան ընթացքում պարզվել է, վոր կողմը 18 տարեկան հասակի չի հասել և այլն), գ) այն դեպքում, յերբ գործում կողմ հանդիսացող իրավական անձի (հիմնարկութիւն, ձեռնարկութիւն, կոլտնտեսութիւն, կոոպերատիվ կամ այլ հասարակական կազմակերպութիւն) գոյութիւնը դադարում է (դադարում ասելով պետք է հասկանալ լուծարք, միացում), դ) այն դեպքում, յերբ կողմերից մեկը գորակոչվում է Բանլորա-Գյուղացիական

Կարմիր Բանակի կամ Ռազմա-Մովսային Նավատորմի գործող գործառն շարքերը, ե) յերբ տվյալ գործը չի կարող լուծվել քաղաքացիական, քրեական կամ վարչական կարգով լուծվող մի ուրիշ գործից առաջ:

Բացի վերոհիշյալ դեպքերից, յերբ դատարանը պարտավոր է առկայել գործի վարույթը, որենքը վորոչ դեպքերում դատարանին իրավունք է վերապահում, յեղնելով գործի կոնկրետ հանգամանքներից, առկայելու գործի վարույթը: Համաձայն ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 114-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները՝ դատարանը կարող է վարույթն առկայել, յեթե կողմերից մեկը գորակոչված է ԲԳԿԻ կամ ՌԾՆ և կամ վորեն պարտադիր պարտականություն կատարելու համար:

Պետք է նկատի ունենալ, վոր նախորդ բաժնում խոսվում է այն անձերի մասին, վորոնք գորակոչված են ԲԳԿԻ կամ ՌԾՆ գործող գործառն, այսինքն, յերբ այն գործառն, վորի մեջ գտնվում է կողմը, ռազմական դրույթյան է փոխադրված, յերբ գործի վարույթի առկայումը պարտադիր է, իսկ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է զինվորական պարտականությունը կատարելու սովորական զինակոչին, հետևապես, նախ այդ չի վերաբերում բոլոր զինվորականներին, որինակ՝ չի վերաբերում հրամանատարական ու պետկազմին, յերկրորդ, դատարանը կարող է և հառկայել գործի վարույթը: Այսպես, որինակ, յեթե հայց է հարուցված ԲԳԿԻ շարքերը կանչված անձից պարտքը բռնազանձելու մասին, դատարանը, յեղնելով կոնկրետ հանգամանքներից, կարող է առանց գործն առկայելու քննել պատասխանողի բացակայությունը, վորին ծանուցադիրը հանձնված է:

Գործի վարույթն առկայելու պատճառները տարբեր են լինում, դրա համար էլ առկայելու ժամանակը տարբեր է վորոչվում: Գործի վարույթի վերսկսումը հաճախ կախված է վորոչ հանգամանքներ ստեղծվելուց, վորին յերբեմն կարող է նպաստել մյուս կողմի, ինչպես և դատարանի նախաձեռնությունը (Քաղ. Դատ. Որ. հոդ. 115):

Գործի վարույթի առկայման կապակցությունը առաջանում է վաղեմության ժամկետների հարցը:

Համաձայն ՌՍՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 116-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների գործի վարույթը կարող է վերսկսվել վաղեմության այն ժամկետի ընթացքում, վոր որենքով սահմանված է իրավահարաբերությունների տվյալ տեսակի համար: Բնականաբար հարց է ծագում, յեթե ժամկետները վոր մոմենտից են հաշվվում: Յեթե գործի վարույթն առկայվել է կողմերից մեկի մահվան հետևանքով, խնամակալություն սահմանելու անհրաժեշտություն և կողմ հանդիսացող իրավական անձի գոյությունը դադարելու հետևանքով, այս վաղեմության ժամկետը հաշվվում է գործի վարույթն առկայելու պահից: Յեթե վարույթն առկայվել է կողմին ԲԳԿԻ և ՌԾՆ գործող գործառնի շարքերը գորակոչելու հետևանքով, հաշվվում է այն պահից, յերբ կողմը ԲԳԿԻ և ՌԾՆ գործող գործառնների շարքերից դուրս է յեկել: Նույն ձևով վաղեմության ժամկետը հաշվվում է նաև այն դեպքերում, յերբ կողմը գորակոչված է ԲԳԿԻ կամ ՌԾՆ շարքերը՝ զինվորական պարտականությունը կատարելու կամ պետական այլ պարտականություն կատարելու համար:

Իսկ յեթե գործի վարույթն առկայված է մինչև մի այլ գործի լուծում, այս վաղեմության ժամկետն սկսվում է այն պահից, յերբ այդ գործով դատարանի դատավճիռը կամ վճիռն որինական ուժի մեջ է մտել, և կամ այն պահից, յերբ վարչական որդանը վորոչում է կայացրել:

Գ Լ Ո Ի Խ VI

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅՄԻ ԿԱՐՃՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԸ

Դատական պրակտիկայում յերբեմն լինում են դեպքեր, յերբ առաջին ատյանի դատարանը զանազան պատճառներով վարույթը կարճում է: ՌՍՖՍՀ և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. որենսդրություն վարույթ-

Թը կարճելու քիչ առիթներ են հայտնի: ՌեֆՍՆՀ Գերա-
զույն Դատարանը դեռ 1925 թվին պարզաբանել է, վոր
գործի վարույթը կարող է կարճվել միայն այն դեպքե-
րում, յերբ այդ նախատեսված է որենքով, իսկ մնացած
դեպքերում դատարանը գործն ըստ էյուլթյան քննելով,
պարտավոր է կամ բավարարել հայցվորի պահանջը (լիտ-
վին կամ մասամբ) և կամ հայցը մերժել:

Գործի վարույթի կարճում կարող է լինել հետևյալ
դեպքերում.

ա) յերբ հայցվորը հրաժարվում է հայցից (ՌեֆՍՆՀ
Քաղ. Դատ. Որ. 2-րդ հոդվ. և մյուս միութ. հանրապետ.
Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները): Այս
դեպքում գործի վարույթի կարճումը հայցվորին զրկում է
պատասխանողի դեմ այնպիսի հայց հարուցելու իրավուն-
քից, վորը բղխում է նույն հիմունքներից, նույն վեճի առ-
թիվ: Դատարանը պարտավոր է ստուգել հայցվորի հայցից
հրաժարվելու պատճառները և կարող է նրա հրաժարականը
չընդունել ու գործը քննել ըստ էյուլթյան.

բ) կողմերի բացակայության համար այն դեպքերում,
վոր նախատեսված են ՌեֆՍՆՀ Քաղ. Դատ. Որ. 100-րդ
հոդվածում և մյուս միութենական հանրապետությունների
Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածներում: Վա-
րույթն այս պատճառով կարճելու կարգը մանրամասն բա-
ցատրված է դատական նիստին վերաբերող գլխում.

գ) վարույթը չվերսկսելու հետևանքով, յեթե այն առ-
կայված է կողմերի համաձայնությամբ (ՌեֆՍՆՀ Քաղ. Դատ.
Որ. հոդ. 114 և ՌեֆՍՆՀ, Թուրք. ՌՍՀ և Վր. ՌՍՀ Քաղ.
Դատ. Որ. համապատասխան հոդվածները):

դ) այն դեպքում, յեթե ավյալ վեճը դատարանի
քննության յենթակա չէ.

ե) այն դեպքում, յերբ կողմերը հաշտություն են կըն-
քում:

Անհրաժեշտ է տարբերել դատական և արտադատա-
կան հաշտությունը: Արտադատական հաշտությունը
կողմերի համաձայնությունն է վեճը վերացնելու մասին,
վոր կողմերը կայացնում են առանց դատարանի մասնակ-

ցության: Այդպիսի գործարքը դատարանը քննում է ապա-
ցույցներին վերաբերող ընդհանուր կանոններով:

Դատական հաշտության գործարքը վիճելի հարաբերու-
թյուններին վերջ տալու վերաբերյալ կողմերի այն համա-
ձայնությունն է, վոր կնքվում է դատական նիստում և
հաստատվում է դատարանի կողմից:

Այդ դեպքում վարույթը կարճվում է առանց վերսկսե-
լու և նոր հայց հարուցելու իրավունքի: Յեթե կողմերից
մեկը հաշտության գործարքը չի կատարում, դատարանը
մյուս կողմի խնդրանքով կատարողական թերթ է տալիս:

Դատական հաշտության գործարքը կնքվում է դա-
տարանի հսկողությամբ: Ուստի դատարանը պետք է
ստուգի գործարքի պայմանները և կարող է մերժել նրա
հաստատումը, յեթե զանի, վոր այն կնքված է զանց անե-
լով կամ խախտելով որենքը, խախտելով պետության,
յերրորդ անձերի շահերը և կամ սպառնալիքի տակ, խա-
բեյությամբ և այլն:

Գ Լ Ո Ի Խ VII

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատարանը վճիռ կայացնում է միայն այն նյութերի
հիման վրա, վորոնք քննվել են դատական նիստում: Մի-
այն դատական նիստի արձանագրության մեջ արված զրան-
ցումների հիման վրա կարելի յե ստուգել, թե վորոշումը
համապատասխանո՞ւմ է արդյոք այն ամենին, ինչ վոր
պարզել է դատարանը: Բացի այդ, վորոշման որինակա-
նությունն ստուգելու համար մասնավորապես անհրաժեշտ
է ստուգել դատարանի կազմը, ով է մասնակցել դատական
նիստին, կողմերին տրված է յեղել արդյոք հնարավորու-
թյուն՝ իրենց դատավարական իրավունքներն ոգտագործե-
լու համար, խախտված չե՞ն յեղել արդյոք այդ իրավունքնե-
րը, կողմերն ինչ միջնորդություններ և հայտարարություն-
ներ են արել, զրանցից վորոնք են բավարարվել դատարանի
կողմից, վորոնք են մերժվել և ինչու և այլն: Այս բոլորը
կարելի յե ստուգել միայն դատական նիստի արձանագրու-
թյունով:

Ահա թե ինչու արձանագրութիւնը բացառիկ կարևոր նշանակութիւն ունի, նա վավերացնում է այն բոլոր փաստերն ու հանգամանքները, վոր տեղի յեն ունեցել դատական նիստում:

Արձանագրութիւնը միակ աղբյուրն է, վորով կարելի յէ ստուգել, թե ինչ ցուցմունք են տվել վկանները, ինչ յեզրակացութիւնն է տվել փորձագետը, ով ինչ փաստաթղթեր է ներկայացրել, ինչ բացատրութիւններ են տվել կողմերը և այլն: Դատական վճիռը կարող է հիմնված լինել դատական նիստի նյութերի վրա, բայց յեթէ այս կամ այն հանգամանքն արձանագրութիւն մեջ գրանցված չլինի, վճիռը կբեկանվի:

Միանգամայն պարզ է, վոր արձանագրութիւնը լրիվ ու կատարյալ լուսանկարը պիտի լինի այն ամենի, ինչ տեղի յէ ունեցել դատական նիստում: Վորքան ավելի լրիվ լինի արձանագրութիւնը, վորքան ավելի ճիշտ արտացոլի դատական նիստի ընթացքը, կողմերի ու դատարանի գործողութիւնները, այնքան ավելի դյուրին կլինի ստուգել վճռի որինականութիւնն ու հիմնավորութիւնը:

Դրա համար ել որենքն ու դատական պրակտիկան դատական նիստի արձանագրութիւնը բացառիկ նշանակութիւն են տալիս: Դատական նիստի արձանագրութիւնը ճիշտ կազմելու համար պատասխանատու յէ դատավորը և վոչ թէ միայն քարտուղարը: Ամենակոպիտ խախտում են հանդիսանում այնպիսի փաստերը, յերբ դատավորը դատական նիստի արձանագրութիւնը չի ստորագրում, վորովհետև դա ցույց է տալիս, վոր նա արձանագրութիւնը չի ել կարգացել: Քիչ չի պատահում, վոր դատավորն արձանագրութիւնն ստորագրում է առանց կարդալու. այդ հավաքութիւնն ստորագրում է առանց կարդալու: Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր քարտուղարը չի սղագրում կողմերի բացատրութիւնները, վկանների ցուցմունքները և այլն, այլ զրի յէ առնում կրճատ ամենաեյականը: Իսկ թէ վորն է եյականը կողմերի բացատրութիւններից կամ վկանների ցուցմունքներից՝ նույնիսկ փորձված քարտուղարը միշտ չէ, վոր կարող է վորոչէլ: Դրա համար ել գործը քննող և

արձանագրութիւն համար պատասխանատու դատավորը վոչ միայն պիտի կարգա արձանագրութիւնը, այլև պիտի ուղղի այն: Դրա համար դատավորը պետք է արձանագրութիւնը կարգա նիստից անմիջապես հետո, իսկ առանձին դեպքերում կարող է հենց դատական նիստում ստուգել քարտուղարի արած գրանցումները՝ հրապարակման միջոցով:

Արձանագրութիւն մեջ անպայման պետք է նշված լինի.

1) Այն վայրը (քաղաքի, գյուղի անունը), վորտեղ քննվել է գործը. գործի քննութիւն ժամանակը (տարի, ամիս, ամսաթիւ), դատական նիստն սկսվելու և ավարտվելու ժամանակը. դատարանի կազմը (նախագահի և ժողատենակալների ազգանունները). քարտուղարի ազգանունը, գործին մասնակցող դատախազի, թարգմանչի ազգանունները:

2) Ինչ գործ է լսվում (ում հայցով, ում դեմ և ինչի մասին):

3) Ճշգրիտ նշում, թե ով է կանչվել դատական նիստին և կանչվածներից ով է ներկայացել, ով չի ներկայացել: Ձներկայացած անձերի նկատմամբ պետք է նշել, թէ կա՞ն արդյոք նրանց ստորագրութիւնները ծանուցադիրը հանձնելու մասին, ինչպես և տեղեկութիւններ՝ նրանց չներկայանալու պատճառների մասին, յեթէ դրանք հայտնի յեն:

Յեթէ գործին մասնակցում են կողմերի ներկայացուցիչները, անհրաժեշտ է նշել ներկայացուցչի ազգանունը և այն լիազորագիրը, վոր նա ներկայացրել է: Յեթէ լիազորութիւնը տրվում է դատարանում բանավոր ձևով, դրա մասին պետք է մանրամասն նշվի արձանագրութիւն մեջ: Անթույլատրելի յեն այսպիսի գրանցումները. «ներկայացել է յին կողմերը և վկանները»:

4) Կողմերի միջնորդութիւնների և այդ միջնորդութիւնների վերաբերյալ դատարանի վորոշման մանրամասն գրանցումը: Յեթէ վորոշումը կայացված է խորհրդակցական սենյակը գնալուց հետո, ապա վորոշումը կցվում է արձանագրութիւնը, իսկ արձանագրութիւն մեջ դրա մասին նշում է արվում:

5) Նախագահի պարզարանումները կողմերի իրավունքներին մասին:

6) Նախագահի նախազգուշացումը վկաներին՝ սուտ ցուցմունքներին համար նրանց պատասխանատվության մասին և նրանց դատական նիստի դահլիճից հեռացնելու մասին:

7) Կողմերի բացատրությունները, վկաների ցուցմունքները, փորձագետին առաջադրած հարցերը և նրա տված պատասխանները (բացի նրանցից, վոր շարադրված են դրավոր յեզրակացություն մեջ):

Այդ գրանցումներն ամենադժվարը, բայց և ամենաեյականն են. դատավորն ու քարտուղարը դրանց վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնեն. այստեղ հարկավոր է ամենամեծ ճշգրտություն և ճշտապահություն: Իերենք մի որինակ: Հայրությունը հաստատելու հայցով պատասխանողը, յերբ նրան հարց են տալիս, թե իրեն հայր ճանաչում է, նա պատասխանում է. «Ընդունում եմ, վոր հայցվորին հետ ամուսնացած եմ յեղել, բայց յերեխային իմը չեմ համարում», իսկ քարտուղարը գրի յե առնում. «Պատասխանողը հայցն ընդունեց»: Մի՞թե պարզ չէ, վոր այդպիսի գրանցումն իրականությունն աղավաղում է: Ուստի դատավորը դատական նիստի ընթացքում պետք է ողնի քարտուղարին նրա դժվարին աշխատանքում: Այդ ոգնությունը կայանում է նրանում, վոր դատավորը նիստին, առանձին բացատրություններին ու ցուցմունքներին այնպիսի ընթացք պիտի տա, վոր քարտուղարը կարողանա պարզ հասկանալ տրված բացատրությունների նյութը և վոր թե հատ ու կենտ բառեր վորսա:

8) Ինչ փաստաթղթեր են հրապարակվել, ինչ իրեղեն ապացույցներ են զննվել և ինչ բացատրություններ են տրվել դրանց կապակցությամբ:

9) Կողմերի վիճաբանության համառոտ շարադրությունը, նրանց վերջնական հետևությունները:

10) Դատախազի յեզրակացությունը (յեթե հայցը նա չի հարուցել):

11) Դատական նիստի ընթացքում դատարանի կայաց-

րած բոլոր վորոշումները, յեթե դրանք կայացված են բանավոր կերպով, հենց դատական նիստի դահլիճում: Իսկ յեթե վորոշումը կայացված է գրավոր կերպով, այն կըցվում է արձանագրությունը, վորի մասին արձանագրություն մեջ էլ նշում է արվում:

Բացի վերոհիշյալներից արձանագրության մեջ անպայման մտցվում է այն ամենը, վորը մտցնելու մասին միջնորդել են կողմերը, յերրորդ անձերը, նրանց ներկայացուցիչները, ինչպես և դատախազը:

Արձանագրության մեջ է մտցվում նաև դատավորի պարզաբանումը դատական վճռի նյության մասին, գանգատարկելու իրավունքի, գանգատ տալու կարգի և ժամկետի մասին:

Արձանագրության մեջ բոլոր գրանցումները պետք է կատարված լինեն այն հետևողականությամբ, ինչ հետևողականությամբ տեղի յեն ունեցել դատարանում:

Համաձայն ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 111-րդ հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածների՝ արձանագրությունը կազմվում է հենց նիստի ժամանակ: Ինչ վերաբերում է արձանագրությունն ստորագրելուն, ապա այդ հարցն առանձին հանրապետությունների որենսգրքերով տարբեր ձևով է լուծվում: Ըստ միքանիսի՝ արձանագրությունն ստորագրում են դատավորը և քարտուղարը, ըստ ուրիշների՝ արձանագրությունն ստորագրում են նաև վկաներն ու փորձագետներն այն մասերում, վորոնք նրանց են վերաբերում, իսկ ըստ Թուրքմենական ԽՍՀ Քաղ. Դատ. Որ. արձանագրությունն ստորագրում են նաև կողմերը:

Փորձը ցույց է տվել, վոր շատ ոգտակար է, յերբ վկաներն ու փորձագետներն ստորագրում են իրենց ցուցմունքների տակ, միայն այն պայմանով, վոր ստորագրելուց առաջ նրանց ցուցմունքները հրապարակվեն: Ինչ վերաբերում է կողմերին, ապա դժվար թե նրանք կարողանան հենց այդտեղ, դատական նիստում, իրենց ստորագրությամբ հաստատել ամբողջ արձանագրության ճշտությունը: Առանձին դեպքերում ոգտակար է նրանց ստորա-

գրել տալ իրենց բացատրութիւնները, որինակ՝ յերբ պատասխանողը հայցն ընդունել է, կամ յերբ հայցվորը հրաժարվում է իր հայցից:

ՌԻՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 12-րդ հոդվածը և մյուս միութենական հանրապետութիւնների Քաղ. Դատ. Որ. համապատասխան հոդվածները կողմերին և դատավարութեան մյուս մասնակիցներին իրավունք են տալիս ծանոթանալու արձանագրութեանը և արձանագրութեանը հաստատելուց հետո վոչ ուշ քան յերեքօրյա ժամկետում ներկայացնելու իրենց դիտողութիւնները: Դատավորը պետք է արձանագրութեանը հաստատի ու ստորագրի անհապաղ նիստը վերջանալու որը:

Արձանագրութեան մեջ փոփոխութիւն մտցնելու հարցը լուծում է դատական նիստում նախադահող դատավորը:

Ի ուր դեպքերում արձանագրութեան մասին արված դիտողութիւնները դատարանի վորոջման հետ միասին անպայման պետք է կցվեն դատական նիստի արձանագրութեանը:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

Գլուխ I.	Քաղաքացիական դործերով դատական նիստի քաղաքական ու դատավարական նշանակութիւնը	3
Գլուխ II.	Այն հիմնական սկզբունքները, վորոնց վրա կառուցված է դատական նիստը	6
Գլուխ III.	Գործի նախապատրաստումը դատական նիստին	17
Գլուխ IV.	Դատական նիստը վարելու կարգը	19
Գլուխ V.	Գործի քննութեան հետաձգումը և գործի վարույթի աւակյումը	46
Գլուխ VI.	Գործի վարույթի կարճումը և հաշտութեան գործարքը	49
Գլուխ VII.	Դատական նիստի արձանագրութիւնը	52

Թարգմանիչ Հ. Հարությունյան
 Խմբագիր Խ. Գալֆանյան
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
 Սրբագրիչ Հ. Դալուխանյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլուխիտի լիազոր Վ. 1183
 Պատվեր № 145, տիրած 1000
 Հանձնվել է արտագրութեան 21/IV 1940 թ.
 Ստորագրված է տպագրելու 15/VII 1940 թ.
 Գինը 1 ո.

Քաղաքական գրականութեան պետական ճրատարակչութեան 1940 թ. տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65

1940 թ.
 Акт № 548
 Виза № л.

ՀՀ Ազգային գրադարան



NL0221354

ԳԻՆԸ 1 Ռ.

37.188

	Арм.
	12-6178 а

С. Н. АБРАМОВ

СУДЕБНОЕ ЗАСЕДАНИЕ
ПО ГРАЖДАНСКИМ ДЕЛАМ
ИЗДАНИЕ НАРКОМЮСТА АРМ. ССР

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65.